efes INSURANCE



ԲԵՌՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԵՐ
CARGO INSURANCE RULES

Confirmed by
EFES ICJSC Board
on 08.08.2023 protocol 01
Active since
08.08.2023

Code: 04.05.01
Version: 1.0

ԲԵՌՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԵՐ
CARGO INSURANCE RULES

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Հիմք ընդունելով սույն **Բեռների ապահովագրության կանոնները** (այսուհետ՝ Կանոններ) և Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, ԷՖԵՍ ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ՝ Ապահովագրողը, կնքում է բեռների ապահովագրության պայմանագրեր հօգուտ այն անձանց (Ապահովադրի կամ Շահառուի), ովքեր գույքի փոխադրման ընթացքում ունեն գույքի պահպանման շահ համաձայն ՀՀ-ում գործող օրենքի, այլ կանոնակարգերի կամ պայմանագրի:

1.2 Սույն Կանոններին համապատասխան կնքված ապահովագրության պայմանագրերով Ապահովագրող է հանդիսանում «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ն: ՀՀ ԿԲ գրանցման համար՝ 14:

1.3 Ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ Ապահովադրին տրվում է Կանոնների մեկ օրինակ, ինչի մասին հատուկ նշվում է Պայմանագրում (Վկայագրում): Կանոնների դրույթները դառնում են Պայմանագրի (Վկայագրի) անբաժան մասը և պարտադիր են Ապահովադրի և Ապահովագրողի համար: Ապահովադիրն ու Ապահովագրողը առանձին կանվանվեն Կողմ, իսկ միասին՝ Կողմեր:

1.4 Սույն Կանոնների համաձայն «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ն իրականացնում է ապահովագրություն ոչ կյանքի ապահովագրության «փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն» դասով:

1.5 Սույն Կանոնները ապահովագրության պայմանագրի բաղկացուցիչ մասն են: Կողմերի համաձայնությամբ սույն Կանոնների որոշ դրույթներ կարող են կիրառվել մասամբ, չկիրառվել, վերաձևակերպվել կամ ավելացվել: Այդպիսի փոփոխությունները պետք է նշվեն ապահովագրության Պայմանագրում (Գլխավոր Պայմանագրում կամ Ապահովագրության Վկայագրում, ինչպես նաև վերջիններից բխող Համաձայնագրերում):

1. GENERAL PROVISIONS

1.1 Based on these Rules and the RA legislation, “EFES” Insurance Closed Joint Stock Company, hereinafter referred to as the Insurer, shall conclude cargo insurance contracts in favor of a person (the Policyholder or the Beneficiary), who has a legitimate interest, based on the law, other regulation or contract, in preserving this property during its shipment by any mode of transport, including transshipment, reshipment, as well as for the time of interim storage.

1.2 Under the insurance policies concluded in accordance with these Rules, "EFES" ICJSC is **an Insurer.** CBA registration – 14.

1.3 When concluding an Insurance Contract, the Insured is given one copy of the Rules, specifically mentioned in the Contract (Certificate), the provisions of which become an integral part of the Contract (Certificate) and are mandatory for the Insurer and the Insured, hereinafter referred to as the Parties.

1.4 According to these Rules, "EFES" CJSC provides insurance under “Cargo in transit insurance” class of non-life Insurance.

1.5 These Rules shall be an integral part of the insurance contract. Upon agreement of the Parties, certain provisions of the Insurance Rules may be limited in application, cancelled, amended or supplemented. Such changes shall be stated in the insurance contract (insurance policy, master policy, insurance certificate).

1.6 Սույն կանոնների իմաստով «Ընդհանուր վթար»-ը սկզբունք է, համաձայն որի ծովային փոխադրման մեջ բոլոր շահառուները (սեփականատերերը) կիսում են նավը կամ բեռի մի մասը փրկելու համար նավի կամ բեռի մի մասի կամավոր զոհաբերության ծախսերը:

1.6 General average is a principle whereby all stakeholders in a sea venture proportionally share any losses resulting from a voluntary sacrifice of part of the ship or cargo to save the whole in an emergency.

2. ԱՊԱՀՈՎԱԴԻՐ ԵՎ ՇԱՀԱՌՈՒ

2.1 Ապահովադիր կարող են լինել ինչպես ՀՀ ռեզիդենտ, այնպես էլ ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք կնքել են բեռների ապահովագրության պայմանագիր:

2.2 Շահառուներն այն անձինք են, ովքեր օրենքով, պայմանագրով կամ այլ իրավական փաստաթղթով, ունեն ապահովագրված բեռի պահպանման շահ:

2.3 Ապահովագրության պայմանագրում կարող է նշանակվել կոնկրետ շահառու կամ կարող է նշվել «Գույքի պահպանման շահ ունեցող անձի օգտին»: Վերջին դեպքում, այն անձը, ով ապացուցում է ապահովագրվող բեռի պահպանման նկատմամբ իր ապահովագրական շահը, հանդիսանում է Շահառու:

2. POLICYHOLDERS (INSURED), BENEFICIARIES

2.1 Policyholders may be both Armenian and foreign resident individuals and legal entities that have entered into a cargo insurance contract.

2.2 The Beneficiaries are persons who have, by virtue of law, contract, or other legal instrument, an interest in preserving the insured cargo.

2.3 The insurance contract may name a concrete Beneficiary or may be signed “on account of whom it may concern”. In the latter case, a person that proves its insurable interest in preserving the insured cargo will be the Beneficiary.

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ

3.1 Ապահովագրության օբյեկտ են համարվում.

a) Ապահովադրի կամ շահառուի ապահովագրության ենթակա շահերը ՝ կապված բեռի տիրապետման, օգտագործման եւ տնօրինման հետ՝ անկախ դրա փոխադրման եղանակից և պայմաններից ՝ դրա կորստի, ոչնչացման կամ վնասման դեպքում,

b) Ապահովագրության պայմանագրով ապահովագրված և ապահովագրական պատահարի արդյունքում առաջացած այլ ծախսերը (Բեռնափոխադրման ծախս, Լրացուցիչ ծախս, և այլն):

Ապահովագրության պայմանագրում նշված և պատշաճ փաթեթավորված և առաքման համար պատրաստված բեռը համարվում է ապահովագրված:

3. SUBJECT-MATTER OF INSURANCE

3.1 The subject-matter of insurance shall be legitimate:

a) Insurable interests of the Policyholder or the Beneficiary related to possession, use and disposal of the cargo, regardless of the method and conditions of its shipping, on account of its loss, destruction or damage,

b) Contingent expenses insured under the Insurance Contract and caused by an insured event.

The cargo specified in the insurance contract and properly packed and prepared for shipping shall be considered insured.

4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ, ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1 Ապահովագրական պատահարը ապահովագրության պայմանագրով նախատեսված իրադարձությունն է, որի տեղի ունելաը հանգեցնում է Ապահովագրողի՝ ապահովագրական հատուցում տրամադրելու պարտականության կատարմանը:

Ապահովագրված ռիսկն այն իրադարձությունն է, որն ունի առաջացման որոշակի հավանականություն և

4. INSURED EVENTS; EXCLUSIONS

4.1 An insured event under the Insurance Contract is an occurred event provided for by the Insurance Contract, the onset of which results in attachment of the Insurer's liability to pay insurance indemnity to the Policyholder or the Beneficiary.

կարող է առաջանալ պատահականորեն, որի համար տրամադրվում է ապահովագրական ծածկույթ:

Ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել հետևյալ պայմաններից (ռիսկերից) մեկի հիման վրա.

4.1.1 Բոլոր Ռիսկերից ապահովագրություն (Ա ռիսկեր)

Այս պայմանների (ռիսկերի) հիման վրա կնքված ապահովագրության պայմանագրի շրջանակներում հատուցման ենթակա է՝

- Ապահովագրված ամբողջ բեռի կամ դրա մի մասի կորուստ, ամբողջական կորուստ կամ վնաս՝ առաջացած ցանկացած պատճառով, որը չի բացառվում Կանոնների 4.2 կետով կամ Ապահովագրության Պայմանագրով:
- Ընդհանուր վթարի դեպքում առաջացած ծախսերը և տույժերը՝ ընդհանուրի մեջ ապահովագրված բեռի նկատմամբ տոկոսային հարաբերակությամբ,
- Բեռը փրկելու համար կատարված բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը, ինչպես նաև վնասը նվազեցնելու և դրա չափը որոշելու ծախսերը, եթե վնասը ենթակա է հատուցման Ապահովագրության Պայմանագրով:

4.1.2 «Նշված պատահարներից ապահովագրություն» (Բ ռիսկեր)

Այս պայմանների (ռիսկերի) հիման վրա կնքված ապահովագրության պայմանագրի շրջանակներում հատուցման ենթակա է՝

- ամբողջ ապահովագրված բեռի կամ ապահովագրված բեռի մի մասի վնաս, ընդհանուր կորուստ կամ ոչնչացում, որը հետևանք է՝

a) հրդեհի կամ պայթյունի, ինչպես նաև հրդեհը մարելու նպատակով իրականացվող գործողությունների,
b) բեռը տեղափոխող նավի բախման, կործանման, շրջման կամ խորտակման,
c) բեռը տեղափոխող նավի ափի հետ կամ այլ ցանկացած արտաքին օբյեկտի (բացառությամբ ջրի) հետ բախման:
d) ապահովագրված բեռը տեղափոխող ցամաքային տրանսպորտային միջոցների ճանապարհատրանսպորտային պատահարի, վթարի, բախման, շրջման,
e) ապահովագրված բեռը տեղափոխող օդանավի վթարային վայրէջքի կամ վթարի,
f) երկրաշարժի, կայծակահարման, հրաբխի ժայթքման,
g) կամուրջների փլուզման,
h) բեռի զոհաբերության՝ բեռի փրկման դեպքում,

An insured risk is an event, which has signs of probability and randomness of its occurrence, for which insurance cover is provided.

The insurance contract may be concluded based on one of the following conditions (risks):

4.1.1 Against All Risks' (A risks)

Under an insurance contract entered into under these conditions, indemnity shall be provided for:

- loss, total loss or damage of the entire insured cargo or part of the insured cargo incurred for any reason, not excluded by these Rules (under Part 4.2 hereof) and the Insurance Contract,
- expenses and contributions on the general average for the percentage of the insured cargo,
- All the necessary and reasonable expenses incurred to salvage the cargo, as well as the costs of reducing the loss and establishing its amount, if the loss is indemnifiable under Insurance Contract conditions.

4.1.2 'With Particular Average' (B risks)

Under an insurance contract entered into under these conditions, indemnity shall be provided for:

- loss, total loss or damage of the entire insured cargo or part of the insured cargo as a result of:

a) fire or explosion, as well as due to measures taken to extinguish the fire,
b) collapse, overturning or sinking of the vessel carrying the cargo,
c) grounding, collision of the cargo vessel with any external object (other than water),
d) accident, crash, overturning, derailment, or collision of ground transport vehicles carrying the insured cargo,
e) accident, emergency landing or crash of an aircraft carrying the cargo,
f) earthquake, lightning strike, volcanic eruption,
g) failure/collapse of bridges,
h) cargo sacrifice in case of a general average,

i) ծովային կամ գետային նավով փոխադրման ընթացքում բեռի ջուրն ընկնելու կամ ալիքներով բեռը ջուրը քշելու,
j) նավամբար, բեռը տեղափոխող միջոց կամ բեռնարկղ ներթափանցած ջրի, ծովաջրի, մթնոլորտային տեղումների և վառելիքի ներթափանցման հետևանքով բեռին պատճառված վնասի,
k) բեռնման և բեռնաթափման ընթացքում ընկած բեռների ամբողջական փաթեթների վնասի,
l) նավի վթարի հետևանքով ապաստանային նավահանգստում բեռների բեռնաթափման,

- Ընդհանուր վթարի դեպքում առաջացած ծախսերը և տույժերը՝ ապահովագրված բեռի նկատմամբ տոկոսային հարաբերակությամբ:,
- Բեռը փրկելու համար կատարված բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը, ինչպես նաև վնասը նվազեցնելու և դրա չափը որոշելու ծախսերը, եթե վնասը ենթակա է հատուցման Ապահովագրության պայմանագրի պայմաններով:

i) cargo jettison or washing overboard during its transit by a seagoing or riverine boat,
j) cargo wetting or damage by seawater, precipitation, or fuel infiltrated into the vessel hold, the body of a vehicle or container,
k) total loss of the entire cargo packages, fallen or dropped in the course of loading and unloading,
l) cargo unloading at the port of refuge in case of an accident on board.

- expenses and contributions on the general average for the percentage of the insured cargo,
- all the necessary and reasonable expenses incurred to salvage the cargo, as well as the costs of reducing the loss and establishing its amount, if the loss is indemnifiable under Insurance Contract conditions.

4.1.3 «Նշված պատահարներից ապահովագրություն» (Գ ռիսկեր)

Այս պայմանների (ռիսկերի) հիման վրա կնքված ապահովագրության պայմանագրի շրջանակներում հատուցման ենթակա է ՝

- ամբողջ ապահովագրված բեռի կամ ապահովագրված բեռի մի մասի վնաս (ամբողջական կամ մասնակի) կամ ոչնչացում՝ պատճառված հետևյալ դեպքերում՝

a) հրդեհ կամ պայթյուն, ինչպես նաև հրդեհը մարելու նպատակով իրականացվող գործողություններ,
b) բեռը տեղափոխող նավի բախում, շրջում կամ խորտակում
c) բեռը տեղափոխող նավի ափի հետ կամ այլ ցանկացած արտաքին օբյեկտի (բացառությամբ ջրի) հետ բախումը:
d) ապահովագրված բեռը տեղափոխող ցամաքային տրանսպորտային միջոցների ճանապարհատրանսպորտային պատահար, վթար, բախում, շրջում,
e) ապահովագրված բեռը տեղափոխող օդանավի հետ տեղի ունեցած պատահար, վթարային վայրէջք կամ վթար,
f) երկրաշարժ, կայծակահարում, հրաբխի ժայթքում,
g) կամուրջների փլուզում,

4.1.3 'Free from Particular Average' (C risks)

Under an insurance contract entered into under these conditions, indemnity shall be provided for:

- loss, total loss or damage of the entire insured cargo or part of the insured cargo as a result of:

a) fire or explosion, as well as due to measures taken to extinguish the fire,
b) collapse, overturning or sinking of the vessel carrying the cargo,
c) grounding, collision of the cargo vessel with any external object (other than water),
d) accident, crash, overturning, derailment, or collision of ground transport vehicles carrying the insured cargo,
e) accident, emergency landing or crash of an aircraft carrying the cargo,
f) earthquake, lightening strike, volcanic eruption,
g) failure/collapse of bridges,

h) ապաստան նավահանգստում՝ բեռի բեռնաթափում բեռնատար նավում վթարի դեպքում,

i) բեռի զոհաբերություն ընդհանուր վթարի դեպքում

- Ընդհանուր վթարի դեպքում առաջացած ծախսերը և տույժերը՝ ապահովագրված բեռի նկատմամբ տոկոսային հարաբերակությամբ:
- Բեռը փրկելու համար կատարված բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը, ինչպես նաև կորուստը նվազեցնելու և դրա գումարը սահմանելու ծախսերը, եթե վնասը ենթակա է հատուցման Ապահովագրության պայմանագրի պայմաններով:

4.2 Բացառություններ

4.2.1 Ապահովագրական պատահար չեն հանդիսանում և ապահովագրական հատուցում չի տրամադրվում այն վնասների համար, որոնց պատճառ է հանդիսանում՝

a) Ապահովադրի, Շահառուի կամ նրանց ներկայացուցիչների դիտավորությունը: Ներկայացուցիչներ են համարվում Ապահովադրի կամ Շահառուի կողմից վարձատրվող ֆիզիկական անձինք և իրավաբանական անձինք, որոնք ապահովագրված բեռի հետ կապված գործողություններ են կատարում Ապահովադրի կամ Շահառուի հետ լիազորությունների փոխանցման կամ գործակալության համաձայնագրով,

b) բեռին բնորոշ և դրա բնական հատկությունները, ներառյալ ֆերմենտացումը, քայքայումը, փոշիացումը, ինքնաբուխ այրումը, կոռոզիան, քաշի կամ ծավալի կորուստը՝ նորմալ կորուստների ստանդարտների սահմաններում,

c) բեռի մեջ առկա արտադրական թերությունները, ինչպես նաև այն թերությունները, որոնք հայտնի էին Ապահովադրին / Շահառուին մինչև ապահովագրության պայմանագրի կնքումը,

d) բեռի փոխադրումը ոչ պատշաճ վիճակում: Բեռի ոչ պատշաճ վիճակ են համարվում բեռի ներքին հատկությունները, որոնք չեն համապատասխանում փոխադրման պայմաններին (խոնավություն, ջերմաստիճան, հասունություն և այլն),

e) Բեռների առաքման հետաձգում, գների անկում, կանխատեսվող շահույթների կորուստ (բացառությամբ 5.1.2-րդ կետով նախատեսված դեպքերի) և այլ անուղղակի վնասների (ներառյալ տուգանքները ուշ առաքման համար կամ ապահովագրված բեռի վաճառքի ժամկետի ավարտի հետ կապված վնասները), նույնիսկ եթե դրանք տեղի են ունեցել ապահովագրված իրադարձության արդյունքում,

h) unloading at the port of refuge in case of an accident on board,

i) cargo sacrifice in case of a general average,

- expenses and contributions on the general average for the percentage of the insured cargo,
- the necessary and reasonable expenses incurred to salvage the cargo, as well as the costs of reducing the loss and establishing its amount, if the loss is indemnifiable under Insurance Contract conditions

4.2 Exclusions

4.2.1 This insurance does not cover, and no indemnity will be paid whatsoever for losses caused by:

a) Intent of the Policyholder or the Beneficiary, or their representatives (individuals employed by the Policyholder or Beneficiary; legal entities that perform actions in relation to the insured cargo under a mandate or agency agreement with the Policyholder or the Beneficiary),

b) special properties and natural qualities of the cargo, including fermentation, putrefaction, shrinkage, spontaneous combustion, corrosion, loss of weight or volume within the standards of normal wastage,

c) manufacturing defects identified in the cargo, as well as defects which were known to the Policyholder/Beneficiary prior to the insurance contract conclusion,

d) cargo shipment in an improper condition. Improper condition of the cargo shall mean intrinsic properties of the cargo that do not meet the conditions of carriage (humidity, temperature, ripeness, etc.),

e) delays in cargo delivery, price declines, loss of anticipated profits (except as provided for in Par. 5.1.2.) and other indirect damages (including penalties for late delivery or losses in connection with the expiry of the insured cargo's sales period), even if they occurred as a result of an insured event, except for losses indemnifiable under the general average or as salvage costs,

բացառությամբ վնասների, որոնք հատուցվել են փրկության ծախսերի ներքո:

f) Փոխադրողի (նավի սեփականատերը, նավի օպերատորը, տրանսպորտային միջոցի սեփականատերը և այլն) անվճարունակությունը կամ սնանկացումը, եթե Ապահովադիրը, Շահառուն կամ նրանց ներկայացուցիչը տեղյակ էր այդ փաստի մասին, կամ պետք է տեղյակ լիներ այդ մասին բեռների բարձման ավարտի կամ պահեստավորման սկզբի ժամանակ,

g) Նավի անսարքությունը կամ ապահովագրվող բեռի անվտանգ փոխադրման / պահպանման համար ավտոտրանսպորտային միջոցի, բեռնարկղի կամ պահեստասենյակի ոչ պիտանի լինելը, եթե այդ անսարքության կամ անպիտանելիության մասին տեղյակ էին Ապահովադիրը, Շահառուն կամ նրանց ներկայացուցիչը, կամ պետք է տեղյակ լինեին այդ մասին բեռների բարձման ավարտի կամ պահեստավորման սկզբի ժամանակ,

h) բեռների տեղափոխման ընթացքում երրորդ անձանց կյանքին, առողջությանը, գույքին և (կամ) շրջակա միջավայրին պատճառված վնասը,

i) ռադիոակտիվ քայքայում/աղտոտում, կամ քիմիական, կենսաբանական, կենսաքիմիական և էլեկտրամագնիսական զենքերի ազդեցությունը, մասնավորապես («Ռադիոակտիվ Ռիսկեր»)՝

- իոնացնող ճառագայթում կամ ռադիոակտիվ աղտոտում ցանկացած միջուկային վառելիքից կամ միջուկային թափոններից կամ միջուկային վառելիքի այրումից,
- ցանկացած միջուկային կայանի, ռեակտորի կամ այլ միջուկային սարքերի կամ սարքերի միջուկային բաղադրիչների ռադիոակտիվ, թունավոր, պայթուցիկ կամ ցանկացած այլ վտանգավոր կամ քայքայիչ հատկություններ,
- ցանկացած պատերազմական զենք, որը կիրառում է ատոմային կամ միջուկային ճեղքման և / կամ միաձուլման կամ այլ նմանատիպ ռեակցիաների, կամ ռադիոակտիվ ուժի կամ նյութի օգտագործում,
- Ռադիոակտիվ, թունավոր, պայթուցիկ կամ ռադիոակտիվ բնույթի այլ վտանգավոր կամ քայքայիչ նյութեր: Այս բացառությունը չի տարածվում միջուկային վառելիքից տարբերվող ռադիոակտիվ իզոտոպների վրա, երբ նման իզոտոպները վերամշակվում, տեղափոխվում, պահվում կամ օգտագործվում են

f) Insolvency of the carrier (ship owner, ship's operator, vehicle owner, etc.) if the Policyholder, the Beneficiary or their representative were aware of this fact or should have been aware of it by the time of the cargo loading completion or the beginning of storage,

g) unseaworthiness of the vessel or unsuitability of the motor vehicle, container, or storage room for safe transit/ storage of the insured cargo, if such unseaworthiness or unsuitability were known to the Policyholder, the Beneficiary or their representative or if they were supposed to know about it by the time of the cargo loading completion or the beginning of storage,

h) damage caused to life, health, property of third parties and/or the environment in the course of cargo shipping,

i) radioactive contamination/ pollution or impact of chemical, biological, biochemical, and electromagnetic weapons ("Radioactive Risks"), namely:

- ionizing radiation or radioactive contamination from any nuclear fuel or nuclear waste or from nuclear fuel combustion,
- radioactive, toxic, explosive or any other hazardous or contaminative properties of any nuclear installation, reactor, or other nuclear device or a nuclear component of such device,
- any weapon of war employing atomic or nuclear fission and/or fusion or other similar reaction, or radioactive force or substance,
- Radioactive, toxic, explosive, or other dangerous or contaminative substances of radioactive nature. This exclusion does not apply to radioactive isotopes different from nuclear fuel, when such isotopes are processed, transported, stored, or used for commercial, agricultural, medical, scientific, or other similar peaceful purposes,

առևտրային, գյուղատնտեսական, բժշկական, գիտական կամ նմանատիպ խաղաղ նպատակներով,

- Ցանկացած քիմիական, կենսաբանական, կենսաքիմիական կամ էլեկտրամագնիսական զենք:

j) Հատուցման ենթակա չէ Ապահովադրի, Շահառուի կամ նրանց ներկայացուցիչների կոպիտ անփութության հետևանքով հասցված վնասը: Կոպիտ անփութություն նշանակում է վերոնշյալ անձանց գործողություններ կամ անգործություն, եթե նրանց հայտնի են կամ ի պաշտոնե պետք է հայտնի լինեին այդպիսի գործողությունների բացասական ազդեցությունը բեռի վրա:

4.2.2 Եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապահովագրությունը չի տարածվում և ապահովագրական հատուցում չի տրամադրվում այն վնասների համար, որոնց պատճառ է հանդիսանում.

a) Ջերմաստիճանի վերահսկման մեխանիզմի խափանումը, որն առաջացել է Ապահովագրության Պայմանագրով հատուցման ենթակա պատահարներից տարբերվող այլ պատճառներով: Սույն կետի շրջանակներում մեխանիզմ նշանակում է փոխադրամիջոցի/բեռնարկղի ջերմամեկուսացված սառնարան կամ ջերմացնող մաս, որը նախատեսված է տվյալ փոխադրամիջոցի/բեռնարկղի նախագծում և տեղադրված է դրա կմախքի մեջ: Եթե այս ռիսկը ապահովագրված է ապահովագրության պայմանագրով, ապա ապահովագրական պատահար է համարվում նաև բեռնարկղի էլեկտրամատակարարման համակարգի խափանում՝ բեռները սառնարանային կամ տաքացվող տարաներով բեռնափոխադրելու ժամանակ («**Սառնարանային ռիսկ**»):

b) բեռի պակասորդը, եթե բեռը հասել է իր վերջնակետին լավ վիճակում, զերծ լինելով բեռնարկղ կամ բեռնափոխադրման մեքենա անօրինական մուտքի նշաններից՝ բեռնափոխադրողի կամ մաքսային մարմնի անվնաս բնօրինակ կնիքով, կամ որը առաքվել է պատվիրատուին՝ ձեռք չտված փաթեթով՝ առանց ապահովագրության ընթացքում բացելու փորձի որևէ հետքերի («**Բեռի պակասը անվնաս բնօրինակ կնիքով**»),

c) Ապահովագրված բեռին որդերի, կրծողների, միջատների, թռչունների և դրանց արտազատման հետևանքով պատճառված վնաս,

d) Մթնոլորտային ջերմաստիճանի և փոխադրող տրանսպորտային միջոցում խոնավության ազդեցությունը, ներառյալ նավի նավամբարի օդը,

e) Բեռի ջերմաստիճանային և խոնավության պայմանների, որի համար նման պայմանների

- Any chemical, biological, biochemical, or electromagnetic weapons.

j) Insurance does not cover and no indemnity will be paid whatsoever for losses resulting from gross negligence of the Policyholder, the Beneficiary, or their representatives. Gross negligence shall mean actions or inaction of the above-mentioned persons as long as adverse consequences such actions might have for the insured cargo were known or should have been known to the responsible person by force of his/her official duties.

4.2.2 Unless otherwise provided for by the insurance contract, this insurance does not cover damages caused by:

a) Failure of temperature controller installation of a conveyance due to causes other than covered by the insurance contract. For the purpose of this item, the installation shall mean a thermally insulated body frame of a conveyance/ container and a refrigerator or heating unit envisaged by conveyance/ container structure design and installed in this body frame. If this peril is insured under the insurance contract, the insured event shall also mean a failure or breakdown of the power supply system of the container while shipping the cargo in refrigerated / heated containers (“**Refrigerator Risk**”),

b) Shortage of cargo, which arrived at its destination in good order, free from break-in into a conveyance / freight car / container with an intact seal of the consignor or the customs, or which was delivered to the consignee in the intact package without any traces of opening during the insurance period (“**Cargo shortage with original seal intact**”),

c) Damage caused to the insured cargo by worms, rodents, insects, birds and their excretion,

d) Impact of atmospheric temperature and humidity inside freight transport, including ship’s hold air,

e) Breach (non-observance), contrary to the Policyholder’s instructions, of temperature and humidity conditions in

պահպանումը ցանկացած տիպի փոխադրամիջոցով համարվում է կրիտիկական, խախտումը (չպահպանելը)՝ հակառակ Ապահովադրի ցուցումների, եթե միայն նման խախտումը տեղի չի ունեցել այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնք սույն Կանոնների և/կամ Ապահովագրության պայմանագրի համաձայն համարվում են ապահովագրական պատահար:

respect of cargo, for which the observance of such conditions during shipment by any mode of transport is critical, unless such breach is exclusively driven by occurrences qualified as insured events under the present Rules and/or the insurance contract,

f) Ցանկացած տեսակի ռազմական գործողություններ և դրանց հետևանքները՝ քաղաքացիական պատերազմ, հեղափոխություն, ապստամբություն, անհնազանդություն կամ դրա հետևանքով առաջացած քաղաքացիական անկարգություններ, կամ պատերազմող պետությունների կողմից կատարված կամ նրանց դեմ ուղղված ցանկացած թշնամական գործողություն, լողացող կամ լքված ականների, տորպեդոների, ռումբերի կամ այլ լքված պատերազմական զենքերի պայթյուն («**Պատերազմական ռիսկեր**»),

f) Any kind of military actions or activities and their consequences, civil war, revolution, insurrection, mutiny, or resulting civil unrest, or any hostile acts committed by belligerent states or directed against them, explosions of stray mines, torpedoes, bombs, or other abandoned weapons of war ("**War Risks**"),

g) Բեռի բռնագրավում, պահանջարկում, ազգայնացում, առգրավում կամ ոչնչացում դե ֆակտո կամ դե յուրե գործող ռազմական կամ քաղաքացիական իշխանությունների պահանջով,

g) Confiscation, requisition, nationalization, seizure, or destruction of the cargo at the request of the military or civil authorities existing de facto or de jure,

h) Գործադուլավորների, լոկաուտների, խռովությունների կամ քաղաքացիական անհնազանդությունների մասնակիցների գործողությունները, ինչպես նաև դրանց հետևանքները («**Գործադուլի Ռիսկեր**»),

h) Actions of strikers, members of lockouts, riots, or civil unrest, as well as their consequences ("**Strike Risks**"),

i) Համապատասխան պետության իրավասու մարմինների կողմից որպես ահաբեկչություն որակված իրադարձությունները, սաբոտաժի գործողություններ, ինչպես նաև հակաահաբեկչական գործողությունները և դրանց հետևանքները («**Ահաբեկչության Ռիսկեր**»),

i) Events qualified as terrorism by competent authorities of a respective state, acts of sabotage, as well as anti-terrorist operations and their consequences ("**Terrorism Risks**"),

j) Էլեկտրոնային / էլեկտրական համակարգերի խափանում, մեխանիկական անսարքություն, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ անսարքությունը առաջացել է ապահովագրության / Ապահովագրողի պատասխանատվության ժամկետում բեռի կամ դրա փաթեթի վրա արտաքին ազդեցությամբ առաջացած վնասների:

j) Disruption in functioning of electronic/electrical systems, mechanical malfunctions, unless they result from a covered external impact on the cargo and damages caused to the cargo or its package during the term of insurance/insurer's liability,

k) Համապատասխան պետության իրավասու մարմինների կողմից որպես խարդախություն որակված գործողություն (խաբեության կամ վստահության չարաշահման միջոցով բեռի տիտղոսի կամ իրավունքի գողություն),

k) Event qualified by competent authorities of a respective state as fraud (theft or acquisition of title to cargo through deceit or breach of trust),

l) Համապատասխան պետության իրավասու մարմինների կողմից որպես «փոխադրամիջոցի հափշտակում բեռի հետ միասին» որակավորված գործողություն (բացի գողությունից և զինված կողոպուտից),

l) Event qualified by competent authorities of a respective state as conveyance theft with cargo inside (other than robbery and armed robbery),

m) Ծովահենություն (կողոպուտ կամ հանցավոր բռնություն ծովում կամ գետում՝ երրորդ կողմի ունեցվածքը յուրացնելու կամ յուրացման սպառնալիքի համար), («**Ծովահենության ռիսկեր**»),

n) Բեռի ոչ պատշաճ փաթեթավորումը և կնքումը, ներառյալ բեռնափոխադրման ոչ պատշաճ նախապատրաստման հետևանքով կամ բեռի ոչ պատշաճ տեղադրումը և/կամ ամրացումը շարժիչային մեքենայի, երկաթուղային մեքենայի, նավամբարի կամ բեռնախցիկի մեջ,

o) Բորբոսի, տաքացման և քրտինքի հետևանքով բեռի ֆիզիկական կորուստ կամ վնաս,

p) Փաթեթի կեղտոտում, պիտակների վնասում կամ նույնականացման պիտակների կորուստ, բացառությամբ այն դեպքերի, երբ ապրանքները պետք է վերափաթեթավորվեն արտադրողի ստանդարտներին համապատասխան,

q) Եթե բեռը փոխադրվել է առանց փաթեթավորման՝ կեղտը, քերծվածքները, ճաքերը, ծռվածքները, որոնք չեն ազդում բեռի ֆունկցիոնալ հատկությունների վրա, ներկի և լաքի վնասները, խամրումը, գույնի փոփոխությունը և կոռոզիան,

r) Հատուկ չափսի (OOG) և ծանր (Heavy Lift) բեռնափոխադրումների իրականացման ընթացքում՝

- եթե փոխադրման երթուղին նախապես հաստատված չէ համապատասխան ճանապարհային ծառայությունների կամ իրավասու մարմնի կողմից,
- տրանսպորտային փոխադրամիջոցների, բեռնամբարձիչների բեռնաթափման և բեռնափոխադրման պայմանների չհամապատասխանություն կամ անբավարարություն փոխադրվող բեռի բնույթի հետ,
- բեռնահատակի բացակայություն կամ անբավարարություն,
- ենթակառուցվածքային տարրերի կարողությունների անհամապատասխանություն բեռի չափի և քաշի հետ (ինչպես փաստաթղթերի համաձայն, այնպես էլ դե ֆակտո),

s) Ծովային փոխադրման համար՝ ծովային նավի միջոցով բեռի փոխադրումը, որը չի բավարարում Institute Classification դրույթների պահանջներին (01/01/2001 Cl. 354) կամ նավ, որը չունի ISM օրենսգրքի համաձայն վավեր վկայական,

t) Վնասը, որը ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատճառվել, կապված կամ առաջացել է ցանկացած համակարգչի, համակարգչային համալիրի, համակարգչային ծրագրի, վնասաբեր կոդի, համակարգչային վիրուսի կամ գործընթացի կամ որևէ

m) Piracy (robbery or criminal violence at sea or river for the purpose of misappropriating third party's property or threat thereof) ("**Piracy Risks**"),

n) Improper packaging and sealing of the cargo, including due to improper cargo preparation for shipping or improper stowing of the cargo in the back of the motor vehicle, rail car, ship's hold, or container,

o) Physical loss of or damage to cargo by mold, warmup, and sweat,

p) Soiling of package, as well as soiling, damage to or loss of labels, identification tags, except where the goods must be repacked in accordance with the manufacturer's standards,

q) If cargo is shipped unpackaged - dirt, scratches, chipping, denting that do not affect functional properties of the item, breach of paint and polish, fading, change of color and corrosion,

r) During shipment of Out of Gauge and Heavy Lift Cargo:

- if the transit route has not been pre-approved by road services,
- non-conformity or unfitness of transport vehicles, cranes terms of lifting and load capacity with the nature of shipped/handled cargo,
- absence or unfitness of dunnage,
- non-conformity (both under the documents and de facto) of cargo size and weight to infrastructure elements capacities,

s) For carriage by sea – carriage of cargo by a marine vessel, which does not meet the requirements of Institute Classification Clauses 01/01/2001 Cl. 354, or a vessel, which does not have a valid certificate as per ISM Code,

t) Directly or indirectly caused by, contributed to by, or arising from the use or operation, as a means for inflicting harm, of any computer, computer system, computer software program, malicious code, computer virus or process or any other electronic system.

այլ էլէկտրոնային համակարգի միջոցով կամ դրանց գործածությամբ:

4.3 Կանոնների 4.2.2. պարբերության մեջ նշված ռիսկերի ապահովագրություն

Կանոնների 4.2.2 կետում նշված ռիսկերը կարող են ապահովագրվել ապահովագրության պայմանագրով, ի լրումն 4.1 կետ նշված ռիսկերի, եթե դա նախատեսված է Ապահովագրության Պայմանագրով:

4.3 Insurance of the risks listed in Par. 4.2.2 of the Rules

The risks listed in Par 4.2.2 hereof may be insured under an insurance contract in addition to the risks listed in Par 4.1 hereof, if this is expressly provided for by the Insurance Contract.

4.4 Վնասված և օգտագործված բեռների ապահովագրություն

Եթե հայտնաբերվում է, որ Ապահովագրողի պատասխանատվության մեկնարկից առաջ ապահովագրվող բեռը վնասված վիճակում է եղել կամ նախկինում օգտագործվել է, ապա այդ բեռը համարվում է ապահովագրված սույն Կանոնների 4.1.3 կետով սահմանված պայմաններով, եթե ապահովագրության պայմանագիրը, կամ ապահովագրության վկայագիրը հատուկ չեն նախատեսում սույն կետը չեղարկող կետ:

4.4 Insurance of damaged and previously used cargo

If it is detected that at inception of the Insurer's liability the insured cargo was in a damaged condition, or was previously used, this cargo shall be insured under the conditions set forth in Par. 4.1.3 hereof, unless the insurance contract, insurance policy or insurance certificate specifically provides for a clause cancelling this paragraph.

4.5 Բեռների ապահովագրություն միջանկյալ պահեստավորման ժամանակահատվածի համար

Եթե Կանոնների 4.1.1-ից 4.1.3 կետերի պայմաններով կնքված Ապահովագրության Պայմանագիրը նախատեսվում է Ապահովագրողի պատասխանատվությունը բեռի նկատմամբ՝ վերաբարձման կամ բարձման վայրերի պահեստներում/պահեստային սենյակներում դրա միջանկյալ պահեստավորման ժամանակահատվածում՝ ապա, եթե Ապահովագրության Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, նշված ժամանակահատվածի համար պահեստավորման ընթացքում հատուցվում են բեռի ամբողջական կամ մասնակի այն վնասները, կորուստը կամ ոչնչացումը, որը հետևանք է.

a) համապատասխան պետության իրավասու մարմինների կողմից որպես գողություն, կողոպուտ, ավազակային հարձակում որակվածգործողության, երրորդ անձանց կողմից բեռների դիտավորյալ ոչնչացման կամ վնասի պատճառման՝ պայմանով, որ ապահովագրության պայմանագրով նախատեսված է բեռների ապահովագրություն վերը նշված ռիսկերից բեռնափոխադրման ժամանակահատվածի համար նույնպես:

b) հրդեհ, պայթյուն, այրվող նյութերի ազդեցություն և հրդեհաշիջման միջոցների կիրառում,

4.5 Cargo insurance for an interim storage period

If the insurance contract made according to items. 4.1.1. to 4.1.3 of the Rules provides for the Insurer's liability for the cargo for the period of its interim storage in warehouses / store rooms in transshipment and reshipment locations, then, unless the insurance contract provides for otherwise, the insurance for the indicated period is provided against physical loss of or damage to the whole cargo or its part during storage resulting from:

a) occurrence qualified by competent authorities of a respective state as burglary, robbery, armed robbery, intentional destruction of or damage to cargo by third parties – provided however that the insurance contract covers cargo insurance against the above perils for the period of shipment,

b) fire, explosion, exposure to combustion products and application of fire-extinguishing measures,

c) soil subsidence, wetting or flooding by groundwater,

c) հողի նստեցում, ստորերկրյա կամ միջերկրյա ջրերի թրջում կամ հեղեղում,
d) պահեստի փլուզումը,
e) ջրմուղի, ջեռուցման, կոյուղու, հրդեհային համակարգերի վթարների հետևանքով, կամ հարակից տարածքներից ջրի ներթափանցման,
f) բնական աղետների:

Միջանկյալ պահեստի ժամանակահատվածի ծածկույթը տրամադրվում է միայն որպես բեռնափոխադրման ապահովագրության լրացում:

Բեռի մեկնարկի կամ վերջնակետի վայրերում պահեստավորման դեպքում բեռը համարվում է ապահովագրված, եթե այն ապահովագրված է ապահովագրության պայմանագրով:

Միջանկյալ պահեստավորման ընթացքում բեռները պետք է տեղակայվեն առանձնացված շինություններում, որոնք պահպանվում են 24-ժամյա հիմունքներով և հագեցած են հակաառևանգման և հակահրդեհային ազդանշանային համակարգերով, Ինչպես նաև բեռի մոտ մուտքը թույլատրվում է միայն պատշաճ կերպով լիազորված անձանց:
- Պահեստը պետք է տեղակայված լինի երկաթբետոնե հատակներով քարե շենքում, պատուհանները (առկայության դեպքում) պետք է պաշտպանված լինեն սենսորներով և անվտանգության ճաղավանդակներով:
- Եթե պահեստը վարձակալության է տրված բեռի սեփականատիրոջը կամ բեռնափոխադրողին, ապա պահեստի սեփականատիրոջ կամ օպերատորի հետ պայմանագիրը պետք է նախատեսի պահեստի գործակալի պատասխանատվությունը ֆիզիկական կորստի, ոչնչացման կամ բեռի որևէ հետևանքով պատճառված վնասների համար, ներառյալ հրդեհը, պայթյուն, երրորդ անձանց կողմից բեռների գողությունը:
- Այրվող և պայթյունավտանգ նյութերի (ներկեր և փայլեցնող նյութեր, հեղուկ գազի և վառելիքի բաքեր և այլն) պահեստավորումը չի թույլատրվում և ենթակա չի ապահովագրության:

d) warehouse collapse,
e) accidents in plumbing, heating, sewage, fire systems, flooding from adjacent premises,

f) natural disasters,

Coverage for the period of interim storage is provided only as a supplement to the shipment insurance.

During storage at the departure or destination points, the cargo shall be deemed insured providing it is expressly envisaged by the insurance contract.

During interim storage, the cargo shall be located in a separate facility guarded on a 24-hour basis and equipped with burglar and fire alarm systems. Access to the cargo shall be granted to duly authorized persons only.

- The warehouse should be located in a stone building with reinforced concrete floors, windows (if any) should be protected with sensors and security bars.

- If the warehouse is rented by the cargo owner or forwarder, a contract with the owner or operator of the warehouse should provide for the warehouse agent's liability for losses due to physical loss, destruction of or damage to the cargo by any cause, including fire, explosion, cargo theft by third parties.

- No storage of flammable and explosive substances (paints and polishes, liquid gas, and fuel tanks, etc.) is allowed, and is not subject to insurance.

4.6 Աղբի հեռացման ծախսեր

Ապահովագրության Պայմանագրով սահմանված լինելու դեպքում՝ ապահովագրությունը կարող է ներառել նաև աղբի հեռացման ծախսերը և վնասված ու փրկության ոչ ենթակա բեռների հեռացման ծախսերը,

4.6 Debris removal costs

Subject to any express provision in the insurance contract, the insurance may also cover debris removal expenses and expenses incurred to dispose of the damaged unsalvageable cargo, if such expenses were necessary and feasible and pre-approved by the Insurer.

եթե այդպիսի ծախսերը անհրաժեշտ էին և նախապես հաստատված էին Ապահովագրողի կողմից:

4.7 Ցուցահանդեսների ապահովագրության պայմաններ (Ցուցահանդեսի Հավելված)

Սույն Հավելվածի շրջանակներում ապահովագրական ռիսկ է համարվում ապահովագրված գույքի ամբողջական կամ մասնակի ոչնչացում և (կամ) կորուստ և (կամ) վնասումը, այն է ՝ ցուցանմուշներին (թանգարաններում, պատկերասրահներում, մասնագիտացված ճյուղային ցուցահանդեսներին ցուցադրվող ցուցանմուշներին և այլն, այդ թվում՝ գեղարվեստական, ոսկերչական և պատմական նշանակություն ունոցող իրերին) և ցուցահանդեսային սարքավորումներին, մշտական պահպանման վայրից կամ Ապահովադրի կողմից նշված մեկնման այլ կետից դրանց տեղափոխման ժամանակ, ցուցահանդեսի վայրից նոր ցուցահանդեսային վայր կամ ժամանակավոր/մշտական պահպանման վայր (ներառյալ բեռնման-բեռնաթափման աշխատանքները), ինչպես նաև դրանց ցուցահանդեսային գործունեության ժամանակահատվածի համար (ներառյալ ցուցահանդեսից առաջ և հետո պահեստավորումը, ցուցահանդեսի վայրում ապակեպատումը և տեղադրումը, ցուցահանդեսային գոտում հավաքումը և ցուցահանդեսի ավարտից հետո ապամոնտաժումը), պայմանավորված՝

4.7.1 Ցուցանմուշների և ցուցահանդեսային սարքավորումների տեղափոխման ընթացքում՝

a) ապահովագրված ցուցանմուշների և ցուցահանդեսային սարքավորումների տեղափոխման կամ բեռնման/բեռնաթափման ընթացքում տեղափոխող մեքենայի հրդեհ, պայթյուն, փոխադրամիջոցների վառելիքի կամ հրդեհի մարման միջոցառումների հետևանքով առաջացած վնասները,

b) ավտոտրանսպորտային պատահար, այդ թվում՝ բախում ստացիոնար իրերի և կամուրջի սյուների հետ, ընկնում կամուրջներից կամ անցուղիներից,

c) գնացքի վթար կամ շարժակազմերի բախում այլ օբյեկտների հետ, ներառյալ երկաթուղուն պատկանող օբյեկտներ (էլեկտրական լոկոմոտիվ, դիզելային էլեկտրական լոկոմոտիվներ, վագոններ, երկաթուղային մեքենաներ և այլն), ինչպես նաև փոխադրման այլ միջոցներ,

d) ինքնաթիռի շարժիչի կամ սարքավորումների խափանում, ներառյալ՝ թռիչքից առաջ կամ վայրէջք կատարելուց հետո,

4.7 Exhibitions insurance conditions (Exhibition Endorsement)

For the purpose of this Endorsement, an insured risk shall mean full or partial destruction and / or loss of and / or damage to the insured property, namely, exhibits (items displayed in museums, art galleries, specialized industry exhibitions, etc., including artistic, jewelry and historic values) and exhibition equipment, for the period of their transportation from the permanent storage area or other point of departure indicated by the Policyholder to the exhibition area, and transportation from the exhibition area to a new exhibition area or temporary / permanent storage area (including loading and unloading operations), and for the period of their exhibition (including stockpiling before and after exhibition, unpacking, and installation in the exhibition area, assembly in the exhibition area, and dismantling upon the end of exhibition) resulting from:

4.7.1 During transportation of exhibits and exhibition equipment:

a) fire, explosion on a vehicle in the course of transportation of insured exhibits and exhibition equipment or in the course of loading / unloading, vehicle fueling, or as a consequence of fire extinguishing measures,

b) motor vehicle accident, including collision with stationary items and bridge pillars; fall from bridges or overpasses,

c) train accident or rolling stock collision with other objects, including those owned by the railway (electric locomotive, diesel-electric locomotives, carriages, rail cars, etc.), as well as other means of transportation,

d) engine or equipment failure of an aircraft, including in the course of taxiing before takeoff or after landing,

e) նավի շարժիչի կամ սարքավորումների անսարքություն (գետագնացություն, ծովագնացություն և այլն),
f) նավաբեկություն; նավի բախում մեկ այլ նավի կամ անշարժ կամ լողացող իրերի հետ՝ նավի շրջում, ցամաքի հետ բախում, նավի բախում ցանկացած արտաքին օբյեկտի հետ (ջրից բացի), որի հետևանքով նավը բարձրանում է ցամաք կամ խորտակվում է,
g) երկրաշարժ, կայծակահարում, հրաբխի ժայթքում,
h) կամուրջների փլուզում,
i) Ընդհանուր վթարի դեպքում բեռների զոհաբերում,
j) ծովային կամ գետային նավով փոխադրման ժամանակ բեռի նավից դուրս ընկնելը կամ բեռի ալիքների հետևանքով նավից ընկնելը
k) բեռը տեղափոխող միջոց կամ բեռնարկղ ներթափանցած ջրի, ծովաջրի, անձրևի և վառելիքի հետևանքով բեռին պատճառված վնասը
l) բեռնման և բեռնաթափման ընթացքում մասնակի կամ ամբողջովին ընկած բեռնատար տարաների կորուստ
m) նավի վթարի հետևանքով ապաստանային նավահանգստում բեռների բեռնաթափում
n) Այն իրադարձությունները, որոնք համապատասխան պետության իրավասու մարմինների կողմից որակվում են որպես ապահովագրված բեռի գողություն՝ տրանսպորտային միջոց մուտք գործելով, թալանման կամ զինված կողոպուտի միջոցով

Բացի այդ, **Ցուցահանդեսի Հավելվածը** ներառում է՝

- Ընդհանուր վթարի դեպքում առաջացած ծախսերը և տույժերը՝ ապահովագրված բեռի նկատմամբ տոկոսային հարաբերակցությամբ:
- բեռը փրկելու համար կատարված բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը, ինչպես նաև կորուստը նվազեցնելու և դրա գումարը սահմանելու ծախսերը, եթե վնասը հատուցելի է Ապահովագրության պայմանագրի պայմաններով:

4.7.2 Ցուցանմուշների և ցուցահանդեսային սարքավորումների ժամանակավոր պահպանման (ապահովագրված ցուցանմուշների և/կամ ցուցահանդեսային սարքավորումների պահպանման վայրերում անընդմեջ գտնվելու դեպքում (ժամանակավոր / մշտական պահեստներ, մաքսային պահեստներ), փոխադրման բոլոր փուլերում (մեկնման կետում, բեռնման, տեղափոխման, առաքման և բեռնաթափումից հետո նշանակման վայրում), ինչպես նաև ցուցահանդեսային գոտիներում (ցուցահանդեսի աշխատանքային ժամերից դուրս, ինչպես նաև պաշտոնական բացումից առաջ և պաշտոնական փակումից հետո' տեղափոխման սպասումով):) ընթացքում՝

a) Բնական (տարերային) աղետներ

e) engine or equipment failure of a vessel (riverine, seagoing, etc.),
f) shipwreck; vessel collision with another vessel or stationery or floating items; capsizing, grounding, collision of the cargo vessel with any external object (other than water); casting ashore; sinking,
g) earthquake, lightning stroke, volcanic eruption,
h) collapse of bridges,
i) cargo sacrifice in case of a general average,
j) cargo jettison or washing overboard during its transit by a seagoing or riverine boat,
k) cargo wetting or damage by seawater, precipitation, or fuel infiltratation into the vessel hold, the body of a vehicle or container,
l) total destruction of the entire cargo packages, fallen or dropped in the course of loading and unloading,
m) cargo unloading at the port of refuge in case of an accident on board,
n) event qualified by competent authorities of a respective state as theft of the insured cargo with breaking into a carrying vehicle, robbery or armed robbery,

Moreover, **Exhibition Endorsement** covers:

- losses, expenses, and contributions on the general average for the percentage of the insured cargo and/or freight,
- all the necessary and reasonable expenses to salvage the cargo, as well as the costs of reducing the loss and establishing its amount, if the loss is indemnifiable under insurance conditions.

4.7.2 During temporary storage of exhibits and exhibition equipment (during uninterrupted stay of the insured exhibits and/or exhibition equipment at storage areas (temporary / permanent warehouses, customs warehouses), at all transportation stages (at the point of departure, waiting for loading, transshipment, reshipment, and the point of destination after unloading), and in exhibition areas (outside of exhibition opening hours, as well as in the periods before the official opening and after official closure pending transportation):

a) natural disasters

b) Հրդեհ,
c) Պայթյուն,
d) Գրունտի նստվածք
e) Թրջում կամ ջրի ներգործություն՝ ստորերկրյա ջրերի վթարներ ջրամատակարարման, ջեռուցման կամ կոյուղու համակարգերում վթարների հետևանքով
f) Իրադարձություն, որը Համապատասխան պետության իրավասու մարմինների կողմիցորակվում է որպես ապահովագրված բեռի գողություն՝ ժամանակավոր պահեստի կամ ցուցահանդեսի վայրի ներխուժմամբ, կողոպուտի կամ զինված կողոպուտի միջոցով:

4.7.3 Ցուցահանդեսի ընթացքում

a) Ցուցահանդեսի տարածքում էլեկտրական սարքերի անսարքության, ինչպես նաև կայծակի հարվածի հետևանքով առաջացած հրդեհ
b) այրվող նյութերի ազդեցությունը և կրակի հետագա տարածումը կանխելու համար հրդեհաշիջման միջոցների կիրառումը՝ անկախ բռնկման վայրից այն դեպքում, երբ դա արտադրական տարածքների, կենցաղային էլեկտրական սարքերի, էլեկտրոնային սարքավորումների և համակարգչային տեխնիկայի բռնկման հետևանք չի եղել, եթե այդ բռնկումը հետագա հրդեհի պատճառ չի հանդիսացել,
c) ջրատար, կոյուղու և ջեռուցման համակարգերում վթարներ, ինչպես նաև հարակից տարածքներից ջրի ներթափանցում (կոտրվածքի հետևանքով ջրի և/կամ այլ հեղուկների վնաս),
d) հրդեհաշիջման ավտոմատ համակարգի հանկարծակի խափանումը կամ միացումը միայն այն դեպքում, եթե դրանք հետևանք չեն՝
- կրակի հետևանքով առաջացած բարձր ջերմաստիճանը
- մոնտաժում, ապամոնտաժում, նորոգում, գործող հրդեհաշիջման համակարգի կառուցվածքի փոփոխությունը

շինարարության թերությունները կամ հակահրդեհային համակարգի փաստացի թերությունները, որոնք հայտնի էին կամ պետք է հայտնի լինեին ապահովադրին / շահառուին նախքան վնասների առաջացումը:
e) բնական աղետներ (փոթորիկ, մրրիկ, հողմապտույտ, թայֆուն, տորնադո, ցունամի, տեղատարափ անձրև, կարկուտ, ջրհեղեղ ու ջրի մակարդակի բարձրացում, միայն եթե ջրի մակարդակը գերազանցում է տվյալ բնակավայրի նորմատիվային մակարդակը, երկրաշարժ, հրաբխի ժայթքում, սողանք, սել)
f) երրորդ անձանց հակաիրավական գործողությունները, մասնավորապես այն իրադարձությունները, որոնք

b) fire
c) explosion
d) soil subsidence
e) wetting or flooding by groundwater accidents in plumbing, heating, or sewage systems

f) Event qualified by competent authorities of a respective state as theft of the insured cargo with breaking into a place of temporary storage or exhibition, robbery or armed robbery.

4.7.3 During exhibition

a) fire caused by ignition of damaged electrical equipment on the premises of the exhibition, lightning stroke,

b) exposure to combustion products and application of fire-extinguishing measures to prevent further fire propagation, regardless of the place of ignition, in case this was not a consequence of inflammation of manufacturing facilities, household electrical appliances, electronic equipment and computer hardware, if this inflammation was not a cause of further fire,

c) accidents in plumbing, sewage, and heating systems, as well as flooding from adjacent premises (damage by water and/or other liquids as a result of breakdown),

d) sudden breakdown or sudden actuation of an automatic fire-extinguishing system, only if they were not a consequence of:
- high temperature caused by fire,
- assembly, dismantling, repairs, change in design of the actual fire-extinguishing system.

construction defects or defects in the actual fire extinguishing system which were known or should have been known to the Policyholder / Beneficiary before the occurrence of losses,

e) natural disasters (windstorm, whirlwind, hurricane, typhoon, tornado, tsunami, rainfall, hailstorm, flood and high water, only if the water level exceeds the standard level for the locality, earthquake, volcanic eruption, landslide, mudslide),

որակվում են համապատասխան պետության իրավասու մարմինների կողմից որպես գողություն, կողոպուտ կամ զինված կողոպուտ, միայն ցուցահանդեսի ընթացքում ցուցահանդեսի կամ թանգարանի պաշտոնական աշխատանքային ժամերին, եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով:

g) ինքնաթիռի, դրա մասերի կամ բեռների անկումը ապահովագրված ցուցանմուշների և սարքավորումների կամ այն շենքերի վրա, որոնցում գտնվում են ցուցանմուշները և/կամ ցուցահանդեսային սարքավորումները

h) ավտոմեքենաների բախում ապահովագրված ցուցանմուշներին և/կամ ցուցահանդեսային սարքավորումներին կամ այն շենքերին, որտեղ գտնվում են ցուցանմուշները և/կամ ցուցահանդեսային սարքավորումները

f) third party wrongful acts, namely, events qualified by competent authorities of a respective state as theft, robbery, or armed robbery – only for the period of exhibition during official opening hours of an exhibition or museum, unless otherwise provided for by the insurance contract,

g) fall of aircraft, their pieces, or their cargo on insured exhibits and equipment or on the buildings where exhibits and/or exhibition equipment are located

h) motor vehicle bumping into insured exhibits and/or exhibition equipment, or into the buildings where exhibits and/or exhibition equipment are located.

4.8Սառնարանի Ռիսկի Ապահովագրության հավելված

Եթե Ապահովագրության Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա Սառնարանային Ռիսկի Ապահովագրության Հավելվածի ներառումը միշտ ենթադրում է հետևյալ պարտադիր պայմանները.

- Տրանսպորտային միջոցում/բեռնարկղում պետք է առկա լինի ջերմաստիճանը գրանցող սարք՝ լավ աշխատանքային վիճակում՝ ճանապարհին բեռների համար սահմանված ջերմաստիճանի սահմանման/պահպանման և վերահսկման համար,
- Տրանսպորտային միջոցը/բեռնարկղը պետք է ունենա թափքի ջերմամեկուսացված շրջանակ և սառնարան կամ ջեռուցման ագրեգատ, որոնք նախատեսված են տրանսպորտային միջոցի/բեռնարկղի կառուցվածքի նախագծով և տեղադրված են թափքի համապատասխան շրջանակում,
- Տրանսպորտային միջոցի/բեռնարկղի արտադրության տարեթիվը չպետք է գերազանցի 10 տարին,
- Փոխադրողը պետք է ունենա գործող հավաստագիր, որը հաստատում է այդպիսի սառնարանի աշխատունակությունը և արտադրողի տեխնիկական սպասարկման պահանջներին համապատասխանությունը,
- Բեռնատարը պետք է զննվի, և սառնարանի աշխատունակությունը պետք է ստուգվի նախքան փոխադրման մեկնարկը,
- Տրանսպորտը պետք է ժամանի բեռնման համար այնպիսի ներքին ջերմաստիճանով, որն անհրաժեշտ է բեռի անվտանգ տեղափոխման համար:

4.8Refrigerator Risk Endorsement

Unless the insurance contract provides otherwise, the use of Refrigerator Risk Endorsement is always subject to the following mandatory conditions:

- Conveyance vehicle/container must be equipped with a temperature recorder in good working order to create/maintain and control the set temperature for the cargo in transit,
- Conveyance vehicle/container must have a thermally insulated body frame and a refrigerator or heating unit envisaged by conveyance/container structure design and installed in this body frame,
- Conveyance vehicle/container must not be older than 10 years,
- Carrier must hold an effective certificate attesting to operability of such refrigerator installation and compliance with the manufacturer's maintenance requirements,
- Conveyance vehicle must be inspected, and refrigerator installation operability must be checked prior to shipment,
- Conveyance must be delivered for loading with inside temperature required for safe cargo shipment.

5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՐԺԵՔ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՉԱՓ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

5.1 Ապահովագրական գումարը Ապահովագրության պայմանագրով/վկայագրով սահմանված գումարն է, որի շրջանակներում Ապահովագրողը պարտավորվում է հատուցել Ապահովադրին կամ Շահառուին պատճառված վնասը ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում:

5.1.1 Եթե Ապահովագրության Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա Ապահովագրական Գումարը պետք է հավասար լինի Ապահովագրված բեռի իրական արժեքին: Այդ արժեքը նշանակում է բեռի իրական արժեքը (ապահովագրական արժեքը)՝ ապահովագրության պայմանագրի կնքման օրը դրա փաստացի գտնվելու վայրում:

5.1.2 Ապահովագրական արժեքը կարող է ներառել փոխադրման, մաքսային ձևակերպման, բեռի պահպանման, ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ), ինչպես նաև բեռի փոխադրման կազմակերպման այլ ծախսեր, եթե այդպիսի ծախսերը չեն կարող դրվել Ապահովադրի կամ Շահառուի վրա:

5.1.3 Ապահովագրական արժեքի մեջ ներառված բոլոր ծախսերը պետք է փաստաթղթավորվեն ապահովագրական հատուցում վճարելու դեպքում:

5.1.4 INCOTERMS-ի համաձայն կնքված արտաքին առևտրի պայմանագրերով բեռների միջազգային փոխադրումների դեպքում ապահովագրական գումարը կարող է սահմանվել բեռի պայմանագրային (իրական) արժեքից տարբեր չափով՝ մատակարարման պայմանագրի պայմաններին կամ դրա փոխարեն օգտագործվող ցանկացած փաստաթղթին համապատասխան:

5.1.5 Եթե բեռի Ապահովագրության պայմանագրով սահմանված Ապահովագրական գումարը փոքր է բեռի Ապահովագրական արժեքից, ապա դա համարվում է գույքի «ոչ լրիվ» ապահովագրություն: Այդ դեպքում Ապահովագրողն Ապահովադրին հատուցում է վերջինիս կրած վնասների մի մասը՝ Ապահովագրական գումարի Ապահովագրական արժեքի նկատմամբ համամասնորեն, եթե այլ բան նախատեսված չէ Ապահովագրության Պայմանագրով:

5. SUM INSURED, INSURED VALUE, INSURER'S LIABILITY LIMIT, INSURANCE PREMIUM, DEDUCTIBLE

5.1 The sum insured is the amount within which the Insurer undertakes to pay indemnity upon the occurrence of an insured event.

5.1.1 Unless otherwise provided for by the insurance contract, the sum insured shall be equal to the actual value of the insured cargo. This value shall mean the actual value (insurance value) of the cargo in the place of its stay as of the day of insurance contract conclusion.

5.1.2 The insured value may include shipping costs, customs clearance, cargo safe-keeping, value added tax (VAT), as well as other expenses on arrangement of cargo transportation unless such costs may be laid on the Policyholder or the Beneficiary.

5.1.3 All the costs included in the insured value shall be documented when paying the insurance indemnity.

5.1.4 For international shipments of cargos according to foreign trade contracts made under INCOTERMS, the sum insured may be set in the amount other than the contract (actual) value of the cargo according to terms and conditions of the supply agreement or any document used instead of it.

5.1.5 If the cargo insurance contract sets the sum insured below the insured value, this is property underinsurance. In this case, the Insurer shall indemnify the Policyholder for part of the losses incurred by the latter in proportion to the ratio of the sum insured to the insurance value, unless provided for otherwise by the insurance contract.

5.1.6 Ապահովագրական գումարը սահմանվում է ՀՀ դրամով, եթե այլ բան նախատեսված չէ Ապահովագրության պայմանագրով: Կողմերի համաձայնությամբ, Ապահովագրական գումարը կարող է սահմանվել այլ արտարժույթով:

5.1.6 The sum insured shall be established by the insurance contract in the currency of the Republic of Armenia, unless otherwise provided for by the insurance contract. The sum insured may be fixed in a foreign currency upon agreement of the parties.

5.2 Ապահովագրության պայմանագրով կարող է սահմանվել Ապահովագրողի պատասխանատվության սահմանաչափ՝ ապահովագրական հատուցման առավելագույն գումար մեկ կամ մի քանի ապահովագրական պատահարների մասով, ըստ բեռի կատեգորիայի, ըստ տրանսպորտային միջոցի, ըստ ապահովագրության տարածքի/ժամանակավոր պահպանման վայրի, ինչպես նաև ապահովագրական ռիսկի:

5.2 The terms of the insurance contract may provide for the Insurer's liability limit – the maximum amount of the insurance indemnity per one or more insured events, per cargo category, per transportation vehicle, per territory of insurance / interim storage location, as well as per insured risk.

5.3 Ապահովագրության պայմանագրով կարող է նախատեսվել վնասների հատուցում՝ «առաջին ռիսկի» պայմանով: «Առաջին ռիսկի» պայմանով բեռի ապահովագրությունը նշանակում է, որ գոյություն ունի հատուցման առանձին սահմանաչափ, որը սահմանված է յուրաքանչյուր ապահովագրական դեպքի համար: Այս դեպքում ոչ լրիվ ապահովագրության ժամանակ չի կիրառվում համամասնական հատուցում: Ընդ որում, յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար ապահովագրողի պատասխանատվությունը չի կարող գերազանցել Պայմանագրում սահմանված հատուցման սահմանաչափը:

«Առաջին ռիսկի» հիմքով հատուցումը կիրառվում է միայն այն դեպքում, եթե դա ուղղակիորեն նախատեսված է Ապահովագրության Պայմանագրով:

5.3 The insurance contract may provide for loss indemnification on the 'first loss' basis. Cargo insurance on a "first loss" basis means that there is a separate limit of indemnity set per insured event. Underinsurance provision will not apply to insurance on "first loss" basis. In this case, the Insurer's liability per each and every insured event may not exceed the indemnity limit set in the policy.

Indemnification on 'first loss' basis shall apply only if it is expressly provided for by the insurance contract.

5.4 Ապահովագրավճար, ապահովագրական սակագներ

5.4.1 Ապահովագրության պայմանագրով ապահովագրավճարը սահմանվում է կողմերի համաձայնությամբ՝ Ապահովագրողի կողմից հաստատված ապահովագրական սակագների հիման վրա՝ հաշվի առնելով ապահովագրության պայմանները:

5.4.2 Գլխավոր պայմանագրի շրջանակներում ապահովագրված բեռնափոխադրումների համար ապահովագրավճարը և/կամ ապահովագրական սակագինը կարող են հաշվարկվել յուրաքանչյուր բեռնափոխադրման համար կամ բեռնափոխադրումների խմբաքանակի համար՝ կախված ժամանակահատվածից և երթուղուց:

5.4 Insurance premium, insurance rates

5.4.1 Insurance premium under an insurance contract shall be set upon agreement between the Parties on the basis of insurance rates approved by the Insurer with due regard to insurance conditions

5.4.2 The insurance premium and / or insurance rate may be calculated separately for each shipment insured under a master policy, or by group of shipments made over a specific period of time or via a specific route. To calculate the insurance premium the Insurer may draw up a bordereau, i.e. a list of insured shipments for the reporting period.

Ապահովագրավճար հաշվարկելու համար Ապահովագրողը կարող է կազմել բորդերո, որը հաշվետու ժամանակահատվածում ապահովագրված բեռների ցանկն է

5.4.3 Ապահովագրողը պետք է նշի սակագինը և/կամ ապահովագրավճարի չափը Ապահովագրության պայմանագրում, Ապահովագրության վկայագրում, հավաստագրում կամ հաշիվ-ապրանքագրում:

5.5 Ապահովագրավճարի վճարման կարգը

5.5.1 Ապահովագրավճարի վճարման կարգը նշվում է ապահովագրական պայմանագրում, ապահովագրական վկայագրում, հավաստագրում կամ հաշիվ-ապրանքագրում:
Ապահովագրության պայմանագիրը (ապահովագրական վկայագիրը) ուժի մեջ է մտնում պայմանագրով սահմանված ժամկետներում՝ ապահովագրության պայմանագրով սահմանված կարգով ապահովագրավճարի վճարման պայմանով: Ապահովագրավճարը (ապահովագրավճարի առաջին վճարումը) չվճարելու կամ մասնակի վճարելու դեպքում ապահովագրության պայմանագիրը համարվում է չգործող և Ապահովագրողը հատուցման պարտավորություն չի կրում:

5.5.2 Պայմանագրում (վկայագրում) նշված ժամկետում հերթական վճարը չվճարելու կամ պայմանագրում նշված չափով այն չվճարելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ Ապահովադրին ուղարկելով գրավոր ծանուցում: Պայմանագրի լուծման ամսաթիվը նշվում է Ապահովագրողի ծանուցման մեջ:

5.5.3 Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրի կողմից ապահովագրական պատահարի առաջացման պահին վճարման ենթակա չվճարված ապահովագրավճարը հաշվանցել Ապահովադրին վճարման ենթակա ապահովագրական հատուցման գումարից:

5.5.4 Ապահովագրողի պահանջով Ապահովադիրը Ապահովագրողին է ներկայացնում ապահովագրավճարի վճարման փաստը, չափը և ամսաթիվը հաստատող փաստաթղթեր:

5.5.5 Եթե ապահովագրավճարը սահմանվել է արտարժույթով, ապա վճարողը կրում է փոխանցման համար գոյացող բոլոր բանկային ծախսերը:

5.6 Չհատուցվող Գումար

5.6.1 Ապահովագրության պայմանագիրը կարող է նախատեսել չհատուցվող գումար, որը հանդիսանում է վնասի չհատուցվող մաս: Չհատուցվող գումարը

5.4.3 The insurance rate and / or the amount of the insurance premium under an insurance contract shall be specified by the Insurer in the insurance contract, insurance policy, certificate or invoice for insurance premium payment.

5.5 Insurance premium payment procedure

5.5.1 The insurance premium payment procedure is specified in the insurance contract, insurance policy, certificate, or an invoice for insurance premium payment.
The insurance contract (insurance policy, certificate) shall take effect within the timelines specified in the contract, provided the insurance premium is paid in line with the procedure fixed in the insurance contract. In case of non-payment or partial payment of the insurance premium (the first insurance premium instalment), the insurance contract shall not be considered valid.

5.5.2 In case of non-payment of a next premium instalment by the deadline specified in the contract (master policy), or its payment in the amount that is lower than specified in the contract, the Insurer may terminate the contract by sending a written notice to the Policyholder. The termination date shall be indicated in the Insurer's notice.

5.5.3 The Insurer may subtract the overdue amount of insurance premium payable by the Policyholder as of the time of an insured event from the insurance indemnity payable to the Policyholder.

5.5.4 At the request of the Insurer, the Policyholder shall submit to the Insurer the documents confirming the fact, the amount, and the date of insurance premium payment.

5.5.5 If insurance premium is denominated in a foreign currency, then the payee bears all the banking transaction costs.

5.6 Deductible

5.6.1 Insurance contract may provide for a deductible, which is a non-indemnifiable part of a loss. Deductible is the Policyholder's participation in the indemnity.

Ապահովադրի մասնակցության չափն է ապահովագրական հատուցմանը:

5.6.2 Չհատուցվող գումարը կարող է սահմանվել բացարձակ գումարով, կամ Ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային հարաբերակցությամբ, կամ վնասի չափի նկատմամբ տոկոսային հարաբերակցությամբ:

5.6.3 Չհատուցվող գումարը կարող է կիրառվել ամբողջ բեռի կամ դրա առանձին մասերի (տարրերի) համար, ինչպես նաև կոնկրետ ապահովագրական ռիսկերի մասով:

5.6.4 Չհատուցվող գումարը կարող է լինել ոչ պայմանական, երբ հատուցման գումարը որոշվում է որպես վնասի գումարի և չհատուցվող գումարի միջև տարբերությամբ, կամ պայմանական, երբ Ապահովագրողն ազատվում է հատուցման վճարումից, եթե վնասի գումարը չի գերազանցում չհատուցվող գումարի չափը, սակայն պատասխանատվություն է կրում ամբողջությամբ հատուցել վնասը, եթե այն գերազանցում է չհատուցվող գումարը:

5.6.5 Եթե չհատուցվող գումարի տեսակը նշված չէ ապահովագրության պայմանագրում, ապա չհատուցվող գումարը համարվում է ոչ պայմանական և կիրառվում է յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար:

5.6.6 Հատուցման չափը հաշվարկելիս չհատուցվող գումարը կիրառվում է յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար, սակայն եթե վնասները պատճառվել են միմյանցից բխող փոխկապակցված իրադարձություններով, ապա չհատուցվող գումարը կիրառվում է միայն մեկ անգամ:

6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ (ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ)

6.1 Ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետը նշվում է Ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում և որոշվում է Կողմերի համաձայնությամբ:
Գլխավոր Պայմանագրով/Վկայագրով ապահովագրության դեպքում Ապահովագրողը պատասխանատվություն է կրում հատուցել այն բոլոր ապահովագրական պատահարներից առաջացած վնասների համար, որոնք տեղի են ունեցել ապահովագրված բեռների հետ, որոնց Ապահովագրության ժամկետը սկսվել է Պայմանագրի գործողության ընթացքում, և որոնք հայտարարագրվել են Ապահովագրողին Գլխավոր

5.6.2 The deductible may be set either in absolute terms or as a percentage of the sum insured, or as a percentage of the loss amount.

5.6.3 The deductible may apply to the entire cargo or to its specific parts (coli, elements), as well as to specific insured risks.

5.6.4 The deductible may be unconditional, where the indemnity amount is defined as the difference between the loss amount and the amount of deductible, or conditional, where the Insurer is exempted from indemnity payment if the loss amount does not exceed the deductible, but is liable for indemnity payment in full if the loss amount exceeds the deductible.

5.6.5 If the type of a deductible is not indicated in the contract, then the deductible shall be unconditional per each insured event.

5.6.6 When calculating the amount of indemnity, the deductible shall apply to each insured event; however, if the losses were caused by interconnected events resulting from each other, the deductible shall apply only once.

6. INSURANCE CONTRACT VALIDITY PERIOD, PERIOD OF INSURANCE (INSURER'S LIABILITY)

6.1 The validity period of the insurance contract shall be specified in the insurance contract and determined upon agreement between the Parties.
In case of insurance under a master contract / policy, the Insurer shall be liable for all the insured events that occurred to insured cargos during the contract validity period, and which were reported to the Insurer in the manner and within the terms set forth in the master contract / policy).

պայմանագրով/վկայագրով սահմանված կարգով և ժամկետներում:

6.2 Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում այն կորուստների, վնասների համար, որոնք տեղի են ունեցել Ապահովագրության պայմանագրի ժամկետի ավարտվելուց հետո:

6.2 The Insurer shall not be liable for the losses incurred outside the insurance (the Insurer's liability) period.

6.3 Եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա բեռի յուրաքանչյուր փոխադրման համար սահմանվում է հետևյալ ապահովագրության ժամկետը (Ապահովագրողի պատասխանատվությունը)՝ ապահովագրության ժամկետը մեկնարկում է բեռը փոխադրողին պահեստում, նավահանգստում, երկաթուղային կայարանում, մեկնման օդանավակայանում (այսուհետ՝ մեկնման կետ) հանձնելու պահից, տևում է ողջ փոխադրման, այդ թվում՝ վերաբարձման ընթացքում, ինչպես նաև միջանկյալ պահեստավորման կետերում, և ավարտվում է բեռը փոխադրողի կողմից ստացողին պահեստում, նավահանգստում, երկաթուղային կայարանում, նշանակման օդանավակայանում (այսուհետ՝ «նպատակակետ») հանձնման պահին:

6.3 Unless otherwise provided for by the insurance contract, the following insurance (the Insurer' liability) period shall be set for each cargo shipping under the insurance contract: the insurance period starts at the moment when the cargo is passed to the carrier in a warehouse, port, railway station, airport of departure (hereinafter referred to as the "departure point"), lasts for the entire shipping, including transshipment and reshipment, as well as warehousing at transshipment points, and ends at the time of cargo delivery by the carrier to the recipient in a warehouse, port, railway station, airport of destination (referred to as the "destination point").

6.4 Մեկնման և նշանակման կետերի անվանումները և հասցեները սահմանվում են տրանսպորտային փաստաթղթերով (բեռնագիր, երկաթուղային և ավիացիոն բեռնագիր կամ համանման այլ փաստաթղթերին) և նշվում են ապահովագրության դիմում-հարցաթերթիկում, պայմանագրում, առաքման մասին ծանուցագրում, հայտարարագրում կամ բորդերոյում:

6.4 Names and addresses of the departure and destination points are established according to transport documents (waybills, rail and air waybills, bills of lading, or other similar documents) and indicated in the application for insurance, a notice of shipment, declaration or bordereau.

6.5 Եթե այլ բան նախատեսված չէ Ապահովագրության Պայմանագրով, ապա ապահովագրության ժամկետի ընթացքում վերաբեռնման կամ միջանկյալ պահեստավորման դեպքում ապահովագրության ժամկետը (տվյալ բեռի համար ապահովագրողի պատասխանատվությունը) դադարում է, ըստ առաջնահերթության, այն պահին երբ՝

6.5 Unless otherwise provided for by the insurance contract, in case of transshipment, reshipment or interim storage within the insurance period, the period of insurance (the Insurer's liability for this cargo) terminates, depending on what happens earlier, at the moment of:

a) բեռը կալանքի տակ է դրվել, բռնագրավվել կամ իշխանությունների կարգադրությամբ օտարվել է,

a) seizure, confiscation, or requisition of the cargo upon the authorities' order,

b) Վերբեռնման վայր և/կամ միջանկյալ պահպանման վայր բեռի առաքումից հետո 60 անընդհատ օրվա լրանալուց հետո՝ յուրաքանչյուր պահպանման վայրում:,

b) expiry of 60 consecutive days in each of the storage locations starting from the date of the cargo delivery to the place of reshipment and / or interim storage,

c) բեռի մի մասի կամ ամբողջական վաճառքի սկիզբը,

c) start of sales of part of the cargo,

d) ապահովագրության պայմանագրով չնախատեսված երթուղով փոխադրման համար բեռը տրանսպորտային միջոց բեռնելու սկիզբը,

d) commencement of cargo loading into a vehicle for transportation on the route not provided for by the insurance contract,

e) բեռի վերամշակման կամ վերափաթեթավորման սկիզբը, եթե նման գործողությունների համար հիմք չէ հանդիսանում ապահովագրական պատահարի հետևանքները նվազագույնի հասցնելը,

f) բեռի ժամանումը Ապահովագրողի կողմից հաստատված կետ, եթե երթուղու շեղումը տարանցիկ փոխադրման ընթացքում բեռի հետ տեղի ունեցած որևէ պատահարի արդյունք է:

e) commencement of processing or repackaging of the cargo, if the reason for such actions is not the one to minimize the consequences of the insured event,

f) cargo arrival at the point approved by the Insurer, if deviation from the route was a result of any accident that occurred with the cargo in course of transit.

6.6 Եթե այլ բան նախատեսված չէ Ապահովագրության Պայմանագրով, ապա Ապահովագրության Պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում կողմերը կարող են երկարաձգել ապահովագրության ժամկետը մինչև ապահովագրված բեռը փոխադրող տրանսպորտային միջոցի ժամանումը նշանակման վայր կամ մինչև ապահովագրված բեռի լրիվ բեռնաթափումը, այն պայմանով, որ Ապահովադիրը/Շահառուն այդ դեպքի մասին ժամանակին ծանուցել է Ապահովագրողին (ոչ ուշ, քան ապահովագրության պայմանագրում որպես ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ավարտի ամսաթիվ նշված օրվանից, և որ Ապահովագրողը գրավոր հաստատում է Ապահովագրության ժամկետի երկարաձգումը Ապահովագրության պայմանագրի հավելվածի կամ համաձայնագրի ստորագրման միջոցով:

6.6 Unless otherwise provided for by the insurance contract, in case the insurance contract expires when shipment of insured cargo is still underway, the Parties may extend the insurance period until the vehicle carrying the insured cargo arrives at the destination point or until the insured cargo is fully unloaded, on condition that the Policyholder / Beneficiary notifies the Insurer of such case timely (not later than the date indicated in the insurance contract as the insurance contract expiry date) and that the Insurer confirms extension of the insurance period in writing by means of signing an Addendum to the insurance contract.

6.7 Գլխավոր պայմանագիրը կարող է դադարեցվել կողմերից որևէ մեկի կողմից դադարեցման օրվանից 30 օր առաջ գրված գրավոր ծանուցմամբ: Գլխավոր պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում Ապահովագրողը պատասխանատվություն է կրում Գլխավոր պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրության ներկայացված բոլոր բեռների համար: Ապահովադիրը Ապահովագրողին վճարում է ապահովագրավճարը Գլխավոր պայմանագրի գործողության ընթացքում ընդունված բոլոր բեռների համար:

6.7 The Master Policy may be cancelled by either of the Parties upon a written notice 30 days prior to the cancellation date. In the event of early cancellation of the Master Policy the Insurer shall be liable for all the shipments, nominated for insurance during the Master Policy validity period. The Policyholder shall pay the insurance premium to the Insurer for all the shipments accepted for insurance during the Master Policy validity period.

6.8 Ապահովադրի կողմից պայմանագրի վաղաժամկետ լուծման (դադարեցման) դեպքում ապահովագրավճարը վերադարձման ենթակա չէ: Կողմերի փոխադարձ համաձայնությամբ պայմանագրի լուծման (դադարեցման) դեպքում ապահովագրավճարի վերադարձման ենթակա մասի վճարման կարգը և

6.8 In the event of early termination of the contract by the Policyholder, the insurance premium is not subject to return. In case of termination of the contract by mutual agreement of the Parties, the manner of payment and amount of return premium shall be specified in a respective agreement between the Insurer and the Policyholder.

չափը որոշվում են Ապահովագրողի և Ապահովադրի միջև համապատասխան համաձայնագրով:

7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԵՎ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1 Ապահովագրության պայմանագիրը (ապահովագրական վկայագիրը) կնքվում է ապահովադրի գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա՝ ապահովագրողի կողմից սահմանված ձևով:

Ապահովագրության պայմանագիրը կնքվում է Կողմերի կողմից ապահովագրության երկկողմ պայմանագիր (Գլխավոր պայմանագրի) կնքելու կամ ապահովագրողի կողմից վերջինիս գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա ապահովադրին ապահովագրական վկայագիր (պայմանագիր) տրամադրելու միջոցով:

7.2 Ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել բեռի կոնկրետ փոխադրման համար (ապահովագրական վկայագիր), կամ որոշակի ժամանակահատվածում առաքված բեռների կամ բեռների կոնկրետ խմբաքանակի վերաբերյալ (գլխավոր պայմանագրով ապահովագրություն):

7.3 Գլխավոր պայմանագիր կնքելիս կողմերն իրավունք ունեն որոշելու Ապահովագրողի կողմից յուրաքանչյուր խմբաքանակ բեռի ապահովագրության ընդունման կարգը: Նման հաստատումը կարող է իրականացվել Ապահովագրողի կողմից Ապահովադրին տրված Ապահովագրության պայմանագրի/վկայագրի ձևով կամ Ապահովագրողի կողմից ապահովագրության դիմում/հայտարարագիր ընդունելու/ստորագրելու ձևով կամ կողմերի կողմից հաշվետու ժամանակահատվածում բորդերո ստորագրելու ձևով:

7.4 Պարտադիր (էական) պայմաններ

Ապահովագրության պայմանագրով կարող են նախատեսվել բեռի փոխադրման էական պայմաններ: Եթե նման պայմանները խախտվում են առաքման ընթացքում, ապա այն իրադարձությունները, որոնք տեղի են ունենում այս առաքման ընթացքում, ապահովագրական պատահար չեն համարվում:

7.5 Ապահովագրական պայմանագրի կնքման նպատակով՝

7.5.1 Իրավաբանական անձ հանդիսացող Ապահովադիրները Ապահովագրողին տրամադրում են

7. INSURANCE CONTRACT CONCLUSION AND ISSUANCE PROCEDURE

7.1 An insurance contract (insurance policy) shall be concluded based on a written or verbal application of the Policyholder in line with a form established by the Insurer.

The insurance contract is concluded by means of signing a bilateral insurance contract (master policy) by the parties, or by means of the Insurer's delivery of the insurance policy (certificate) to the Policyholder on the basis of the latter's written or verbal application.

7.2 The insurance contract may be concluded for specific cargo shipping (insurance policy, certificate), or in respect of a particular cargo batch, or the cargoes shipped within a specific period (insurance under a master policy).

7.3 In case of conclusion of an insurance contract in the form of a master policy, the parties may determine the procedure for the Insurer's acceptance of each cargo shipment for insurance. Such acceptance may be made in the form of an insurance policy or an insurance certificate issued by the Insurer to the Policyholder, or in the form of the Insurer's acceptance / signing of the application / declaration for insurance, or in the form of signing of the bordereau for the reporting period by the Parties.

7.4 Mandatory (essential) conditions

The insurance contract may provide for material conditions of cargo shipping. If such conditions are violated in the course of shipment, events that occur in the course of this shipment are not considered insured.

7.5 For the purpose of insurance contract execution:

7.5.1 Policyholders that are legal entities shall provide the Insurer with the documents allowing the following information to be established[1]:

փաստաթղթեր, որոնք թույլ են տալիս սահմանել հետևյալ տեղեկությունները[1]:

- Անվանում
- հարկ վճարողի կոդը կամ օտարերկրյա կազմակերպության կոդը,
- պետական գրանցման համարը,
- բանկային տվյալներ,
- գտնվելու վայրը (Իրավաբանական հասցեն)
- գործունեության հասցեն,
- շահառուներ (7.5.3 կետում ֆիզիկական անձանց համար նախատեսված տվյալների սահմաններում)
- կոնտակտային անձի անուն, ազգանուն, հեռախոսահամար և էլ. փոստի հասցե,
- Ապահովագրողի կողմից պահանջվող այլ տեղեկատվություն կամ փաստաթղթեր,

- Name,
- taxpayer ID or foreign company code (KIO code),
- state incorporation number,
- banking details,
- location (legal address)
- actual address
- beneficiaries (within the scope of data envisaged for individuals in item 7.5.3)
- contact person's full name, telephone number and email
- any other document or information requestes by the Insurer.

7.5.2 Ֆիզիկական անձ Ապահովադիրը պարտավոր է ապահովագրողին տրամադրել հետևյալ տեղեկությունները սահմանող փաստաթղթեր[2]:

- ազգանուն, անուն և հայրանուն (եթե այլ բան չի բխում օրենքից)
- քաղաքացիություն,
- ծննդյան ամսաթիվ և ծննդավայր,
- Նույնականացման տվյալները – անձնագրի, սոցիալական քարտի տվյալներ,
- քաղաքացիություն չունեցող անձի իրավունքը հաստատող փաստաթղթի տվյալները
- բնակության հասցե և գրանցում,
- հարկ վճարողի նույնականացման համար, առկայության դեպքում,

7.5.2 An individual Policyholder shall provide the Insurer with the documents allowing the following information to be established[2],

- last name, first name and patronymic (unless otherwise arises out of law or national tradition)
- citizenship,
- date and place of birth,
- ID details,
- data of a migration card or a document attesting to a foreign or stateless person's right to stay (live) in the Republic of Armenia,
- residence address/registration,
- taxpayer ID number (if applicable).

Ապահովագրողը կարող է կրճատել վերոնշյալ փաստաթղթերի ցանկը:

The Insurer may reduce the list above.

7.5.3 Ապահովագրողի կողմից ապահովագրության օբյեկտի նկատմամբ ապահովագրական շահը որոշելու համար Ապահովադիրը պետք է տրամադրի հետևյալ փաստաթղթերը, այդ թվում՝ առանց սահմանափակման.

- Գնման և վաճառքի համաձայնագիր,
- Հաշիվ-ապրանքագիր,
- Ընկերության հաշվապահական գրքերում և փաստաթղթերում ճանաչման վկայական,

7.5.3 In order for the Insurer to determine an insurable interest in preserving the property accepted for insurance the Policyholder shall provide the following documents including without limitation:

- Purchase and Sale Agreement,
- Invoice,
- Certificate of recognition in the books and records of a company,

[1] *Նշված տեղեկությունները ապահովադրի կողմից տրամադրվում են նաև ապահովագրության պայմանագրով շահառու (ապահովագրված անձինք) հանդիսացող անձանց նկատմամբ:*
The stated data shall also be provided by the Policyholder with regards to persons who are beneficiaries (insured persons) under the insurance contract.

[2] *Նշված տեղեկությունները ապահովադրի կողմից տրամադրվում են նաև ապահովագրության պայմանագրով շահառու (ապահովագրված անձինք) հանդիսացող անձանց նկատմամբ:*
The stated data shall also be provided by the Policyholder with regards to persons who are beneficiaries (insured persons) under the insurance contract.

- Լիզինգի / գրավի պայմանագիր կամ ապահովագրական շահագրգռություն հաստատող այլ փաստաթուղթ,

  Եթե ապահովադիրը ապահովագրության պայմանագրի կնքման պահին չունի այնպիսի փաստաթղթեր, որոնք հաստատում են շահառուի շահագրգռվածությունը այդ գույքի նկատմամբ, ապա պայմանագրում չպետք է նշված լինի ոչ մի շահառու:

  Ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում ապահովագրական հատուցումը շահառուին վճարվում է միայն այն դեպքում, եթե շահառուն ունի ապահովագրված գույքի նկատմամբ շահի փաստաթղթային ապացույց:

- Leasing/ Pledge Agreement; or other document confirming insurable interest.

  If the Policyholder at the time of execution of the insurance contract does not have any documents in support of the Beneficiary's interest in such property, there should be no beneficiaries named in the contract.

  Upon the occurrence of an insured event, insurance indemnity should be paid to the Beneficiary only if the Beneficiary has documentary evidence of interest in the insured property.

8. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1 Ապահովադիրը պարտավոր է՝

8.1.1 Ապահովագրության պայմանագիր կնքելիս ապահովագրողին տրամադրել ապահովադրին հայտնի փաստեր, որոնք էական նշանակություն ունեն ապահովագրական պատահարի առաջացման հավանականության և ապահովագրական ռիսկից հնարավոր վնասների չափի որոշման համար: Էական փաստեր են համարվում ապահովագրության պայմանագրում, ապահովագրության մասին դիմումում կամ ապահովագրողի գրավոր հարցմամբ շարադրված փաստերը:

8.1.2 Գլխավոր պայմանագրով ապահովագրության դեպքում ժամանակին (Գլխավոր պայմանագրով սահմանված ժամկետներում) ապահովագրողին ներկայացնել բեռնման հայտարարագրեր (ծանուցումներ)՝ ապահովագրության պայմանագրում նշված պահանջներին համապատասխան:

Ապահովագրության պայմանագրով նախատեսված կարգով չհայտարարված կամ ապահովագրողի կողմից չընդունված բեռները ապահովագրված չեն համարվում:

8.1.3 ժամանակին և ամբողջությամբ վճարել ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրավճարը կամ դրա հերթական մասը:

8.1.4 Ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում Ապահովադիրը (Շահառուն), իրեն հայտնի դառնալուս հետո, պարտավոր է անհապաղ, ոչ ուշ, քան 3 օրացույցային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել Ապահովագրողին Ապահովագրության պայմանագիր կնքելիս

8. RIGHTS AND OBLIGATIONS OF THE PARTIES

8.1 The Policyholder shall:

8.1.1 Provide, upon conclusion of the insurance contract, the Insurer with the facts known to the Policyholder, which are essential for determining the probability of insured event occurrence and the size of potential losses from the insured risk. The essential facts are the facts set forth in the insurance contract, the insurance application, or the Insurer's written request.

8.1.2 In case of insurance under a master policy, submit shipping declarations (notices) to the Insurer in a timely manner (within the timelines set by the master policy) in accordance with the requirements specified in the insurance contract.

Shipments not declared in line with the procedure provided for by the insurance contract, or not accepted by the Insurer shall not be considered insured.

8.1.3 Promptly and fully pay the insurance premium or insurance instalments provided for by the insurance contract.

8.1.4 Within the validity period of the insurance contract, the Policyholder (Beneficiary) shall immediately notify the Insurer in writing as soon as they become aware of the significant changes in the circumstances reported to the Insurer upon the insurance contract conclusion.

Ապահովագրողին հայտնած հանգամանքներում տեղի ունեցած էական փոփոխությունների մասին:

Էական փոփոխություն են համարվում՝

- պայմանագրում նշված երթուղուց կամ սովորական երթուղուց շեղումները,
- առաքման հետաձգումը ավելի քան 7 օրացուցային օր,
- մեկ այլ տեսակի տրանսպորտային միջոցի օգտագործումը,
- Բեռի տեղափոխումը այլ տրանսպորտային միջոց, այդ թվում լիխտեր կամ լաստանավ, որը նախատեսված չի եղել Ապահովագրության պայմանագրով կամ դիմումով:
- բեռի առաքման, բեռնաթափման, պահպանման կամ նշանակման վայրի փոփոխություն,
- բեռների տեղափոխում տախտակամածով կամ բաց տրանսպորտային միջոցով,
- առաքման ձեւի փոփոխություն,
- պայմանագրով չնախատեսված բեռի ժամանակավոր պահպանումը,
- պայմանագրով կամ ապահովագրական հայտարարությամբ նախատեսված անվտանգության միջոցներից շեղումը (բեռի պահպանության և ուղեկցման առկայությունը, կազմը, տեխնիկական հագեցվածությունը):

Ապահովագրողի կարծիքով ապահովագրական ռիսկի մեծացում առաջացրած հանգամանքների էական փոփոխությունների մասին ծանուցված Ապահովագրողը կարող է պահանջել փոփոխություններ կատարել ապահովագրության պայմանագրի պայմանների մեջ կամ ռիսկի ավելացմանը համաչափ վճարել լրացուցիչ ապահովագրավճար:

Եթե Ապահովադիրն առարկում է ապահովագրության պայմանագրի պայմանների փոփոխման կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարման դեմ, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծել ապահովագրության պայմանագիրը՝ համապատասխան էական փոփոխությունների առաջացման պահից:

Ապահովագրողն իրավունք չունի պահանջել ապահովագրության պայմանագրի լուծում, եթե ռիսկի մեծացման հանգեցնող հանգամանքներն արդեն դադարել են գոյություն ունենալուց:

Եթե Ապահովադիրը դիմումում կամ Ապահովագրողի հարցումների պատասխաններում տրամադրել (նշել) է ոչ արժանահավատ (ոչ ճշմարիտ) և/կամ ոչ լրիվ տեղեկություններ ապահովագրության մասին, ապա

Significant changes, in any case, shall mean the following:

- deviation from a regular route or the route or specified in the contract,
- shipment delay for more than 7 calendar days,
- use of another type of vehicle,
- transshipment to another vehicle, including lighter or barge, not envisaged by the insurance contract or application,
- change of the cargo reshipment, unloading, storage or destination point,
- cargo shipping on deck or in an open vehicle,
- change in the shipping method,
- interim storage of the cargo not envisaged by the contract,
- deviation from the security measures stipulated in the contract or insurance application (availability, composition, technical equipment of the cargo security and escort).

The Insurer notified of substantial changes in the circumstances resulting, in the opinion of the Insurer, in the increase of the insured risk, may require amendments to the terms of the insurance contract or payment of additional premium proportionate to the risk increase.

If the Policyholder objects to amending the terms of the insurance contract or additional insurance premium payment, then the Insurer may terminate the insurance contract unilaterally from the moment of the respective significant changes onset.

The Insurer may not demand termination of the insurance contract if the circumstances entailing the risk increase have already ceased to exist.

If the Policyholder has provided (stated) unreliable (false) and / or incomplete information in the application for insurance or answers to the Insurer's requests, then the

Ապահովագրողն իրավունք ունի պահանջել պայմանագիրը անվավեր ճանաչել:

Insurer may demand that the contract is recognized null and void.

8.1.5 Հնարավոր ապահովագրական պատահարի առաջացման դեպքում Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է ձեռնարկել տվյալ հանգամանքներում ողջամիտ-մատչելի միջոցներ՝ պոտենցիալ վնասների նվազեցման ուղղությամբ, կատարել Ապահովագրողի գրավոր հանձնարարականները՝ հնարավոր վնասի չափը նվազեցնելու նպատակով :

8.1.5 Upon occurrence of a potentially insured event the Policyholder (Beneficiary) shall take measures reasonable and available in the circumstances to reduce potential losses and shall fulfil the Insurer's written recommendations on loss amount reduction.

8.1.6 Հնարավոր ապահովագրական պատահարի առաջացման դեպքում Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է աջակցություն ցուցաբերել Ապահովագրողի ներկայացուցիչներին և Ապահովագրողի կողմից ներգրավված անկախ փորձագետներին՝ վնասի չափը և պատճառները որոշելիս:

8.1.6 Upon occurrence of a potentially insured event the Policyholder (Beneficiary) shall assist representatives of the Insurer and independent experts engaged by the Insurer in determining the amount and the causes of the loss.

8.1.7 Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է անփոփոխ պահպանել վնասված բեռը և Ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին տրամադրել զննություն կատարելու հնարավորություն:

Ապահովադիրը (Շահառուն) իրավունք ունի անվտանգության ապահովման նպատակով փոփոխել ապահովագրական պատահարի առաջացման վայրը՝ վնասները նվազեցնելու նպատակով՝ Ապահովագրողի համաձայնությամբ կամ ապահովագրական պատահարի առաջացման մասին Ապահովագրողին գրավոր ծանուցելուց 7 աշխատանքային օր հետո:

8.1.7 Upon occurrence of a potentially insured event the Policyholder (Beneficiary) shall keep the damaged cargo unchanged and give the Insurer or its representative an opportunity to do a survey.

The Policyholder (Beneficiary) may change the loss scene for security considerations, with the purpose to reduce losses, upon the Insurer’s consent, or upon expiry of 7 business days after notifying the Insurer of the event in writing.

8.1.8 Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը պետք է ժամանակին միջոցներ ձեռնարկի և կատարի անհրաժեշտ ֆորմալ ընթացակարգերը, որպեսզի Ապահովագրողը հնարավորություն ունենա սուբրոգացիոն հայց ներկայացնել վնասի համար պատասխանատու կողմին հատուցված վնասների համար (փոխադրող, առաքող, երրորդ անձ): Վնասի համար պատասխանատու անձի դեմ հայց ներկայացնելու կարգը և ժամկետները որոշվում են գործող օրենսդրությանը համապատասխան:

8.1.8 Upon occurrence of a potentially insured event the Policyholder shall take timely measures and perform necessary formal procedures so that the Insurer would have the opportunity to file a subrogation claim against the person responsible for the losses indemnified in line with insurance cover (carrier, forwarding agent, third parties). The procedure and timelines for filing a claim against the person responsible for the losses shall be defined in line with applicable law.

8.1.9 Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է հետևել Ապահովագրողի ցուցումներին վնասների համար պատասխանատվություն կրող անձի նկատմամբ

8.1.9 The Policyholder (Beneficiary) shall follow the instructions of the Insurer on the paperwork preparation to ensure the Insurer’s right of claim against the person

Ապահովագրողի պահանջի իրավունքն ապահովելու համար փաստաթղթեր պատրաստելու մասին, փոխանցել բոլոր փաստաթղթերն ու ապացույցները, ինչպես նաև այն բոլոր տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են Ապահովագրողին սուբրոգացիայի իրավունքի իրականացման համար:

liable for the losses, to transfer all the documents and evidence as well as all the information necessary for the Insurer to exercise the subrogation right.

8.1.10 Ապահովադիրը պարտավոր է տեղեկացնել Ապահովագրողին, եթե նրան հայտնի են, ապահովագրված բեռի վերաբերյալ այլ Ապահովագրողների հետ կնքված ապահովագրության որևէ պայմանագրերի կամ վկայագրերի մասին:

8.1.10 The Policyholder shall inform the Insurer if he is aware of any insurance contracts or policies in respect of the insured cargo concluded with other insurers.

8.2Ապահովադիրն իրավունք ունի՝

8.2.1 Ապահովագրության պայմանագրում նշանակել շահառու կամ փոխարինել շահառուին այլ անձով՝ Ապահովագրողին գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով: Շահառուն չի կարող փոփոխվել այն բանից հետո, երբ նա կատարել է ապահովագրության պայմանագրով ստանձնած որեւէ պարտավորություններ կամ Ապահովագրողին է ներկայացրել վնասների հատուցման պահանջ:

8.2The Policyholder may:

8.2.1 Appoint or replace the Beneficiary specified in the insurance contract with another person by sending a written notice to the Insurer. The Beneficiary may not be changed, after it has performed some of the obligations under the insurance contract or has filed a claim for indemnity with the Insurer.

Շահառուն կարող է ապահովադրի կողմից նշանակվել յուրաքանչյուր ապահովագրված բեռի համար առանձին: Նշանակված շահառուի տվյալները (անունը, Իրավաբանական հասցեն, բանկային տվյալները և այլ տվյալներ, ըստ սույն կանոնների 7.5.1.-7.5.3 կետերի) նշվում է ապահովագրության մասին դիմումում: Շահառուն կարող է լինել նաև մատակարարը (վաճառողը) կամ բեռն ստացողը (գնորդը), յուրաքանչյուրը այն ապահովագրական դեպքերի առնչությամբ, որոնք տեղի են ունեցել այն պահին, երբ համապատասխան կողմը կրում է ապրանքի կորստի կամ վնասման ռիսկ:

The Beneficiary may be appointed by the Policyholder separately for every insured shipment. The data on the appointed Beneficiary (full name, legal address, banking details and other data in line with Par. 7.5.1.- 7.5.3 hereof) shall be indicated in the Insurance Application. The Beneficiary may also be a supplier (salesperson) or consignee (buyer), each in respect of the insured events that occurred at the moment when the respective party carries the risk of loss or damage of the goods.

8.2.2 "Գույքի պահպանման շահ ունեցող անձի օգտին" մեթոդով կնքած Ապահովագրության պայմանագիրը/վկայագիրը փոխանցել ապահովագրված բեռի պահպանման գույքային շահ ունեցող անձին:

8.2.2 Transfer the insurance policy/certificate, under which the insurance is provided ‘on the account of who it may concern’, to the person with a property interest in the preservation of the insured cargo.

8.2.3 Ապահովագրողից պահանջել ապահովագրական հատուցում ապահովագրության պայմանագրով և սույն կանոններով սահմանված կարգով և ժամկետներում:

8.2.3 Claim insurance indemnity from the Insurer in line with the procedure and within the timelines set forth in the Insurance Contract and these Rules.

8.3Ապահովագրողը պարտավոր է՝

8.3.1 Ապահովադրին տրամադրել ապահովագրության պայմանագրի կնքումը հաստատող փաստաթղթերը: Գլխավոր պայմանագրով/վկայագրով առանձին բեռների ապահովագրությունը հաստատվում է ապահովագրողի կողմից՝ գլխավոր

8.3The Insurer shall:

8.3.1 Issue the documents proving insurance contract conclusion to the Policyholder. Insurance of individual shipments under the Master Contract / Policy shall be confirmed by the Insurer in the manner and on the terms set forth by the Master Contract / Policy.

պայմանագրով/վկայագրով սահմանված կարգով և պայմաններով:

8.3.2 Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադրին/շահառուին կամ նրա նշանակած ներկայացուցչին վճարել ապահովագրական հատուցում՝ Ապահովագրության պայմանագրով/սույն կանոններով նախատեսված կարգով և ժամկետներում:

8.3.2 Upon occurrence of an insured event, pay insurance indemnity to the Policyholder/ Beneficiary or their appointed representative in line with the procedure and within the timelines stipulated in the Insurance Contract and these Rules.

8.4Ապահովագրողը իրավունք ունի՝

8.4.1 Իր հաշվին կատարել ապահովագրության ենթակա կամ ապահովագրված բեռի զննություն: Իր հաշվին ներգրավել փորձագիտական կազմակերպության (սյուրվեյերին)՝ պոտենցիալ ապահովագրական պատահարի առաջացման դեպքում վնասի պատճառներն ու չափը պարզելու համար: Ապահովադրի կողմից ուսումնասիրություն իրականացնելու համաձայնությունը ստանալու համար ապահովագրողը համապատասխան էլեկտրոնային նամակ է ուղարկում ապահովադրի/շահառուի ապահովագրության պայմանագրում նշված պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին, որի պատասխանը ապահովագրողի հասցեին ուղղված էլեկտրոնային ապահովադրից/շահառուից ստացված նամակով համաձայնությունը համարվում է բավարար:

8.4The Insurer may:

8.4.1 At its own expense, survey the cargo put up for insurance or insured. Involve, at its own expense, an expert organization (surveyor) to establish the causes and the extent of the damage upon occurrence of a potentially insured event. To obtain the Policyholder's approval for a survey, the Insurer shall send a respective email to the Policyholder's/Beneficiary's official e-mail address specified in the insurance contract, a response to this email sent to the Insurer's address shall be a duly received approval of the Policyholder/Beneficiary.

8.4.2 Իր հաշվին ներգրավել զինված պահակախմբի, որոնք կուղեկցեն բեռը, կամ ձեռնարկել այլ միջոցներ, որոնք նվազեցնում են բեռի կորստի հավանականությունը:

8.4.2 Engage, at its own expense, armed security to escort the cargo or take other measures reducing the probability of the loss.

8.4.3 Պոտենցիալ ապահովագրական պատահարի առաջացման մասին տեղեկատվություն ստանալիս միակողմանիորեն և իր հաշվին ձեռնարկել գործողություններ՝ բեռը որոնելու, փրկելու, հետագա վնասները նվազեցնելու, գումարը և վնասի չափը պարզելու ուղղությամբ: Սակայն Ապահովագրողի և նրա ներկայացուցիչների՝ բեռը փրկելու և պահպանելու գործողությունները հիմք չեն հանդիսանում Ապահովադրի կամ Շահառուի ապահովագրական հատուցում ստանալու իրավունքը ճանաչելու համար:

8.4.3 Upon the receipt of information about occurrence of a potentially insured event, unilaterally and at its own expense, take actions to search, salvage the cargo, to reduce further losses, to establish the amount and the causes of the loss. However, the actions of the Insurer and its representatives to salvage and preserve the cargo shall not be a basis for recognition of the right of the Policyholder or the Beneficiary to receive insurance indemnity.

8.4.4 Պոտենցիալ ապահովագրական պատահարի առաջացման մասին ապահովադրից/շահառուից ծանուցում ստանալու դեպքում և/կամ ապահովագրական հատուցում վճարելու մասին դիմում ստանալու դեպքում շահառուից պահանջել սույն պայմանագրով ապահովագրական հատուցում ստանալու իրավունքի հաստատում:

8.4.4 Upon the receipt of the Policyholder / Beneficiary's notice of occurrence of a potentially insured event and / or application for insurance indemnity payment, require from the Beneficiary a confirmation of the right to receive insurance indemnity hereunder.

8.5Կողմերի իրավունքներն ու պարտականությունները՝ կապված անձնական տվյալների մշակման հետ

8.5Rights and duties of the Parties related to personal data processing

8.5.1 Սույն Կանոնների հիման վրա ապահովագրության պայմանագիր կնքելով՝ Ապահովադիրը հաստատում է իր համաձայնությունը նրանում, որ ապահովագրության պայմանագրի գործողության ողջ ժամկետի ընթացքում Ապահովագրողը կարող է իրականացնել այնտեղ նշված ֆիզիկական անձանց անհատական տվյալների մշակում և օգտագործում:

Ապահովադիրը անձնական պատասխանատվություն է կրում ապահովագրության դիմումում և/կամ ապահովագրության պայմանագրում նշված ֆիզիկական անձ Շահառուի և այլոց ՝ նրանց անհատական տվյալների մշակման համաձայնություն տալու համար: Սույն Կանոններում անհատական տվյալների մշակում ասելով՝ հասկանում ենք ֆիզիկական անձանց անհատական տվյալների հավաք, համակարգում, կուտակում, պահպանում, ճշտում (նորացում, փոփոխում), օգտագործում, կոդավորում, վնասազերծում, ինչպես նաև այլ գործողությունների իրականացում՝ վիճակագրական և ապահովագրական ռիսկերի վերլուծության իրականացման նպատակներով: Սույն Կանոնների հիման վրա ապահովագրության պայմանագիր կնքելով՝ Ապահովադիրը նույնպես հաստատում է այլ ապրանքների և ծառայությունների, ինչպես նաև Ապահովագրողի հետ իրավահարաբերությունների երկարացման պայմանների մասին տեղեկատվություն տրամադրելու համաձայնությունը: Վերը նշված նպատակների իրականացման համար Ապահովագրողը իրավունք ունի ապահովագրության պայմանագրի կնքման և կատարման հետ կապված իրեն հայտնի դարձած անհատական տվյալները փոխանցել երրորդ անձանց, որոնց հետ Ապահովագրողը կնքել է համապատասխան համաձայնություններ՝ ապահովելով անհատական տվյալների վստահելի պահպանությունը և գաղտնիությունը: Ապահովագրողը պարտավորվում է ապահովել Ապահովադրի անհատական տվյալների պահպանություն և չհրապարակում այլ նպատակներով, քան նախատեսված է սույն հոդվածներում: Անհատական տվյալների մշակման վերաբերյալ համաձայնությունը կարող է ետ կանչվել անհատական տվյալներով սուբյեկտի կողմից՝ լրիվ կամ այլ ապրանքների և ծառայությունների մասին տեղեկատվության մասով, Ապահովագրողին գրավոր դիմումի ուղարկման ճանապարհով՝ թույլատրող հավաստի հաստատելու տվյալ դիմումի ընդունման ամսաթիվը Ապահովագրողի կողմից:

Իր համաձայնությամբ անհատական տվյալների մշակման համար սուբյեկտի կողմից

8.5.1 Conclusion of insurance agreement on the basis of present Rules, the Insured confirms its agreement that the Insurer may perform analyse of data of individuals mentioned in the agreement during the whole period of effectiveness of the Insurance Policy.

The Insured is personally responsible for the agreement to analyse personal data of the individuals, Beneficiaries mentioned in the Insurance Policy. According to present Rules, under processing of personal data is understood collection, systematization, accumulation, storage (refreshing, changing), using, encryption, blocking of personal data on the individual, as well as other acts for statistical purposes and for analysing the insurance risk. By concluding insurance agreement on the basis of present Rules, the Insured also confirms agreement of giving information about other items and services, and about terms of prolongation of legal relations with the Insurer. For implementation of the above mentioned purposes the Insurer is entitled to transfer the information known by him, concerning insurance agreement and its performance to third parties, with whom the Insurer has concluded appropriate agreements – securing safe restoration and confidentiality of personal data. The Insurer undertakes the security and non-disclosure of personal data with aims other than mentioned in present paragraph. The agreement on processing personal data may be withdrawn by the subject of personal data fully or concerning the part of other items and services, by sending written application to the Insurer reliably to determine the date of receipt of the application.

դրանց լրիվ ետ կանչման դեպքում այդ անձի ապահովագրության պայմանագրի գործողությունը դադարում է, իսկ Ապահովադիր հանդիսացող սուբյեկտի կողմից այդպիսի համաձայնության ետ կանչման դեպքում ապահովագրության պայմանագիրը դադարում է ամբողջությամբ: Ընդ որում, ապահովագրության պայմանագրի գործողությունը վաղաժամկետ դադարում է Ապահովագրողի կողմից անհատական տվյալների մշակման համաձայնության ետ կանչման համապատասխան դիմումի ստացման ամսաթվից: Ապահովագրության պայմանագրի գործողության դադարեցման (այդ թվում՝ դրա լուծման),ինչպես նաև իր անհատական տվյալների մշակման վերաբերյալ անհատական տվյալների սուբյեկտի կողմից համաձայնության ետ կանչման դեպքում, Ապահովագրողը պարտավորվում է վերացնել այդպիսի անհատական տվյալները ապահովագրության պայմանագրի գործողության 100(հարյուր) տարին չգերազանցող ժամկետում կամ Ապահովագրողի կողմից անհատական տվյալների մշակման համաձայնության ետ կանչման դիմումի ստացման պահից:

In case of complete withdrawal of agreement on giving personal data by the subject of personal data, the insurance agreement of that person is annulated and in case of withdrawal of agreement on giving such information by the Insured, the Insurance Policy is fully considered invalid. The Insurance Policy is preterm annulled starting from the date of receipt of appropriate application on withdrawal of agreement on giving personal data. In case of termination of the Insurance Policy (including annulation), as well as withdrawal of agreement of processing personal data by the subject of personal data, the Insurer undertakes to destroy such personal data within a time period, not exceeding 100 (one hundred) year or starting from the date of receipt by the Insurer of application on withdrawal of agreement on personal data processing.

9. ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

9.1 Ապահովադիրը և/կամ Շահառուն, ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության վերաբերյալ տեղեկանալուց հետո անհապաղ տեղեկացնում է Ապահովագրողին: Եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով, հատուցման դիմումն Ապահովագրողին է ներկայացվում ոչ ուշ, քան Ապահովադրին կամ շահառուին հայտնի դառնալու օրվանից 3 ամսվա ընթացքում:

Պատահարի վերաբերյալ ծանուցումն Ապահովագրողին ուղարկվում է կամ գրավոր, ինչպես նաև ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով, կամ բանավոր՝ զանգահարելով Ապահովագրողի կողմից Ապահովագրության Պայմանագրով տրամադրված հեռախոսահամարներին:

9.2 Ապահովադիրը կամ շահառուն ձեռնարկում է բոլոր ողջամիտ և մատչելի միջոցները հնարավոր վնասները նվազեցնելու համար և հետևում է ապահովագրողից ստացված գրավոր կամ Ապահովագրողի

9. PROCEDURE IN CASE OF CLAIM

9.1 The Policyholder or the Beneficiary, having learnt of an event that may give rise to a claim, shall immediately notify the Insurer or its representative thereon. Unless otherwise provided for by the insurance contract, the Claim Application shall be sent to the Insurer not later than during 3 working days following the date when the such occurrence became known to the Policyholder or the Beneficiary.

The notification shall be sent to the Insurer in writing, as well as by fax, e-mail or a phone call to the mentioned number of Insurer in the insurance contract.

9.2 Upon the occurrence of an event that may give rise to a claim, the Policyholder or the Beneficiary shall take all reasonable and available measures to mitigate potential losses and follow the written instructions received from the Insurer.

պաշտոնական հեռախոսահամարով ցուցած բանավոր հրահանգներին:

Եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով, վնասների նվազեցման ծախսերը, վնասների չափի սահմանման ծախսերը և ապահովագրողի կողմից հաստատված այլ ծախսերը կրում է ապահովադիրը/շահառուն:

Unless otherwise provided for by the insurance contract, loss mitigation costs, costs to establish the loss amount and other costs approved by the Insurer shall be borne by the Policyholder/Beneficiary.

Եթե վնասը համարվում է ապահովագրական դեպք, ապա այդ ծախսերը հատուցվում են ապահովագրողի կողմից, նույնիսկ եթե ձեռնարկված միջոցները ձախողվել են:

If the loss is recognized as an insured event, such costs will be indemnified by the Insurer, even if the measures taken were unsuccessful.

Ապահովագրողն ազատվում է այն վնասների հատուցումից, որոնք առաջացել են ապահովադրի/շահառուի վնասների նվազեցման ողջամիտ և մատչելի միջոցներ չձեռնարկելու հետևանքով:

The Insurer shall be released from indemnifying the damages arising due to the fact that the Policyholder / Beneficiary had failed to take reasonable and available loss mitigation measures.

9.3Փորձագետը

9.3.1 Ապահովագրության պայմանագրով նախատեսված լինելու դեպքում հատուցման դիմում ներկայացնելու հիմք հանդիսացող պատահարի առաջացման դեպքում Ապահովադիրը/շահառուն ներգրավում է փորձագիտական կազմակերպություն (սյուրվեյեր)՝ վնասի բնույթը, պատճառները և չափը պարզելու համար: Փորձագիտական կազմակերպությունը համարվում է հաստատված, եթե այն նշված է ապահովագրության պայմանագրում կամ հաստատված է Ապահովագրողի կողմից՝ գրավոր պահանջի մասին դիմումը ստանալուց հետո:

9.3Surveyor

9.3.1 Subject to respective provision in the contract, upon occurrence of an event that may give rise to a claim, the Policyholder / Beneficiary shall engage an expert organization (surveyor) to establish the nature, causes, and the amount of the loss. The expert organization is considered to be approved if it is specified in the insurance contract or is approved in writing by the Insurer after receiving the Claim Application.

9.3.2 Ապահովագրողը և ապահովադիրը/շահառուն իրավունք ունեն ինքնուրույն ներգրավել փորձագիտական կազմակերպություն (սյուրվեյեր) պոտենցիալ ապահովագրական պատահարի առաջացման դեպքում վնասների պատճառներն ու չափը պարզելու համար:

9.3.2 The Insurer and the Policyholder/Beneficiary are free to send, on their own, an expert organization (surveyor) to establish the causes and the amount of the loss in case of occurrence of a potentially insured event.

9.3.3 Փորձաքննության ծախսերը կրում է այն կողմը, որի նախաձեռնությամբ ներգրավվել է փորձագետը: Եթե վնաս առաջացրած պատահարը համարվում է ապահովագրական, ապա Ապահովագրողը փորձագիտական ծախսերը եւս ներառում է վնասի հատուցման մեջ, եթե փորձագիտության անհրաժեշտությունը եւ ծախսը նախապես հաստատվել էր Ապահովագրողի կողմից գրավոր:

9.3.3 The costs of the survey / expert appraisal shall be incurred by the Party on whose initiative the surveyor/expert has been engaged. If the event that resulted in the loss is recognized as an insured event, the Insurer shall indemnify the Beneficiary for the surveyor/expert services costs when paying the insurance indemnity if his involvement and the need for such a survey/appraisal have been approved in writing by the Insurer.

9.4 Վերականգնում

9.4Reconditioning

Բեռի՝ մինչև ապահովագրական պատահարի տեղի ունենալը, վիճակի վերականգնման անհրաժեշտության դեպքում վնասված բեռի վերականգնման բոլոր միջոցառումները պետք է գրավոր համաձայնեցվեն Ապահովագրողի հետ:

If it is needed to restore the cargo to the condition in which it was before occurrence of an insured event, all the measures to restore the damaged cargo shall be approved in writing by the Insurer.

Եթե ապահովադիրը (շահառուն) կատարել է վերականգնողական աշխատանքներ առանց ապահովագրողի գրավոր համաձայնության, ապա ապահովագրողն իրեն իրավունք է վերապահում ապահովագրական հատուցման չափը հաշվարկելիս ներառել վերականգնման աշխատանքների արժեքը ապահովագրողի կողմից ընտրված մասնագիտացված կազմակերպության կողմից հաշվարկված անհրաժեշտ և հիմնավորված ծախսերի չափով:

If the Policyholder (Beneficiary) has performed restoration works without the written consent of the Insurer, the Insurer reserves the right, when calculating the amount of insurance indemnity, to include the cost of restoration works in the amount of necessary and reasonable costs, calculated by the Insurer or a specialized organization chosen by the Insurer.

10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

10.1 Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման մասին դրական կամ բացասական որոշում կայացնելու համար Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է տրամադրել պատահարի առաջացման հանգամանքները և պատճառները, ինչպես նաև պատճառված վնասի չափը հավաստող փաստաթղթերը: Ապահովադիրը պարտավոր է տրամադրել փաստաթղթերի բնօրինակները կամ դրանց պատճենները, որոնք հաստատված են Ապահովադրի կնիքով և նրա լիազոր ներկայացուցչի ստորագրությամբ:

10. DOCUMENTS REQUIRED FOR INSURANCE INDEMNITY PAYMENT

10.1 For the Insurer to make a decision on payment or refusal of insurance indemnity, the Policyholder (Beneficiary) shall provide the Insurer with the documents required to establish the circumstances and causes of the potentially insured event and the amount of incurred damage. The Policyholder shall provide the original documents or copies certified by the Policyholder's seal and the signature of its authorized representative.

10.2 Ապահովագրողի կողմից պահանջված փաստաթղթերը ներառում են՝

10.2 The documents required by the Insurer shall include:

10.2.1 Ապահովադրի կամ Շահառուի կողմից Ապահովագրողին ներկայացված հայցադիմումը, որը պարունակում է վնասի գումարի հաշվարկ և ապահովագրական հատուցման փոխանցման համար բանկային տվյալները (բնօրինակը),

10.2.1 Claim Application filed with the Insurer by the Policyholder or the Beneficiary, containing a calculation of the loss amount, and specifying the banking details for insurance indemnity transfer (original),

10.2.2 Առաքման փաստը հաստատող փաստաթղթեր.

10.2.2 Documents confirming the fact of the shipment:

a) Կախված տրանսպորտային տեսակից ՝ կոնոսամենտ, երկաթուղային բեռնագիր, ավիացիոն բեռնագիր, CMR, ավտոմոբիլային բեռնագիր կամ այլ փաստաթղթեր՝ գործող օրենսդրությանը համապատասխան, որոնք հաստատում են բեռի առաքումը եւ պարունակում են բեռի վնասվածքի վերաբերյալ նշում,

a) Depending on the type of transport: a Bill of Lading, a Charter, a railroad waybill, an air waybill, a CMR, a motor waybill or other documents in accordance with applicable law, confirming the shipment with a note of the loss or of carrier's statement preparation,

b) Տրանսպորտային, բեռնափոխադրման կամ էքսպեդիցիոն պայմանագիր, փոխադրման պայմանագիր և/կամ այդ փոխադրման դիմում/հայտ, որն ընդունել է փոխադրողը և Ապահովագրողի լրացուցիչ պահանջով՝ բեռնափոխադրման վճարումը

b) A freight forwarding services agreement, a carriage contract and an application for this shipment accepted by the Carrier and - upon additional requirement of the Insurer - copies of the documents confirming payment for the freight, a forwarding agent's receipt, a power of

հավաստող փաստաթղթերի պատճենները, բեռնափոխադրողի անդորրագիրը, բեռը ստանալու համար վարորդին տրված լիազորագիրը, վարորդի անձնագրի և վարորդական իրավունքների պատճենները, բեռնատար ավտոմեքենայի և կցորդի գրանցման վկայականների պատճենները, բեռի ընդունման-հանձնման ակտը:

c) Կախված տրանսպորտային տեսակից ՝ կոնոսամենտ, բեռնագիր, ավիահրանքային, CMR, ավտոմոբիլային բեռնագիր կամ այլ փաստաթղթեր՝ գործող օրենսդրությանը համապատասխան, որոնք հավաստում են առաքումը եւ պարունակում են հատուցման պահանջ:

10.2.3 Ապահովագրական պատահարի տեղի ունենալը ապացուցող փաստաթղթեր՝

a) Վնասված բեռի վերաբերյալ հաշվետվություն (ազատ / ընդհանուր հաշվետվություն, փոխադրողի հայտարարություն, ՏՈՐԳ-2 կամ ՏՈՐԳ-3 և այլն), պատահարի վերաբերյալ Ապահովադրի կողմից կատարված ներքին հետաքննության մասին հաշվետվություն՝ հաղորդված դեպքի պատճառների և հանգամանքների նկարագրությամբ և մեղավոր անձանց մատնանշմամբ:

b) Վնասված/ ոչնչացված/ գողացված/ կորցրած գույքերի ցանկ:

c) Մասնագիտացված կազմակերպության կամ արտադրողի տեխնիկական եզրակացությունը և/կամ անկախ փորձագիտական կազմակերպության եզրակացությունը վնասված/ոչնչացված գույքի վիճակի, օգտագործման պիտանիության և դրա վերականգնման հնարավորության մասին:

d) Անկախ փորձագիտական կազմակերպության եզրակացությունը վնասված բեռի վիճակի և պատահարի հետևանքով կրած վնասների չափի մասին, վնասված բեռի լուսանկարները,

e) Ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքում՝ պատահարի մասին իրավասու մարմինների կողմից տրված տեղեկանքներ, վարչական վարույթ և/կամ ուսումնասիրության ընթացքում կազմված այլ փաստաթղթեր:

f) Հրդեհի դեպքում՝ հակահրդեհային ծառայության կողմից տրված տեղեկանք, հրդեհի մասին եզրակացություն, հրդեհափորձարկման լաբորատորիայի կամ հրշեջ փորձագետի տեխնիկական եզրակացություն հրդեհի բռնկման պատճառի մասին, քրեական գործ հարուցելու մասին որոշում կամ քրեական գործ հարուցելու մերժումը:

attorney issued to the driver for receiving the cargo, copies of the driver's domestic passport and driving license, copies of registration certificates for the truck and the trailer, a delivery and acceptance report for the cargo,

c) Depending on the type of transport: Bill of Lading, Charter, railroad waybill, air waybill, CMR, motor waybill or other documents in accordance with the applicable law, confirming the shipment with a note of the claim or of carrier's statement preparation,

10.2.3 Documents confirming occurrence of insured event:

a) A report on damaged cargo (a report in a free/general form, the carrier's statement, a report based on form TORG-2 or TORG-3 etc.), a report of internal investigation carried out by the Policyholder in respect of the occurrence describing the causes and circumstances of the reported event and stating guilty parties,

b) A list of the property damaged/ destroyed/ stolen/ lost,

c) A technical opinion of a specialized organization or the manufacturer, and/or an opinion of an independent expert organization on the condition of the property damaged/destroyed, its suitability for use and a possibility of its recovery,

d) An opinion of an independent expert organization on the condition of the damaged cargo and the amount of loss incurred as a result of the occurrence, photos of the damaged cargo,

e) In case of a motor vehicle accident: certificates issued by competent authorities in respect of the occurrence, an administrative order and other documents drafted in course of the investigation,

f) In case of fire: a certificate issued by the firefighting service, a report on the fire, a technical opinion of the fire testing laboratory or a fire expert on the ignition cause, a decision on or a rejection of the institution of a criminal case,

g) Ջրատար, ջեռուցման, կոյուղու կամ հակահրդեհային համակարգերում վթարի կամ հարակից տարածքներից ջրի վնասման դեպքում՝ կառավարչի/շահագործող մարմնի կամ վթարային ծառայության հաշվետվություն:

h) Տեղեկանքներ և փաստաթղթեր իրավասու մարմիններից, որոնք հաստատում են տարերային աղետների կամ այլ արտակարգ իրավիճակների փաստը:

i) Բեռի նկատմամբ կոտրանքով գողություն, կողոպուտ, հարձակում, խարդախություն իրականացնելու կամ այն փոխադրող տրանսպորտային միջոցի հետ գողություն իրականացնելու դեպքում՝ քրեական գործ հարուցելու որոշում կամ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում, տուժող ճանաչելու մասին, քրեական գործի վարույթը կասեցնելու կամ վարույթը կարճելու մասին որոշումներ:

j) Ընդհանուր վթարի դեպքում, նավապետի բողոքը, նավի հաշվեգրքի քաղվածքը, միջինի ճշտումը, տեղեկատվական նամակները բեռնափոխադրողից կամ նավի օպերատորից,

k) Վնասներ հայտնաբերած անձանց և փոխադրողների բացատրագրերը,

l) Երկաթուղային տրանսպորտով ապահովագրված բեռի փոխադրման դեպքում՝ փոխադրողի տեղեկանք, կորստի նշումով երկաթուղային բեռնագիր, կայանի պետին ներկայացված կորստի մասին դիմում և/կամ այլ փաստաթղթեր, որոնք թույլ են տալիս հաստատել իրադարձության տեղի ունենալը և հանգամանքները:

m) Ապահովագրված բեռի՝ օդային տրանսպորտով փոխադրման դեպքում՝ փոխադրողի տեղեկանք, տվյալ իրադարձության մասին նշումով և/կամ այլ փաստաթղթեր, որոնք թույլ են տալիս պարզել իրադարձության առաջանալու պատճառները և հանգամանքները:

10.2.4 Ապահովադրի կամ Շահառուի՝ ապահովագրված բեռի նկատմամբ գույքային շահը հավաստող փաստաթղթեր

a) Առքուվաճառքի/մատակարարման պայմանագիր, մատակարարի պայմանագիր կամ հաշիվ-ապրանքագիր, նշելով առաքման պայմանները և բեռի՝ կորստի կամ վնասման ռիսկի փոխանցման ամսաթիվը, վճարման փաստաթղթերը, առաքման պատվերի պատճենը, փաթեթավորման թերթիկը, սպեցիֆիկացիան, գնացուցակը և բեռնագիրը,

b) Ընկերության հաշվապահի կողմից վավերացված էմիսիոն կտրոն և փաստաթուղթ, որը հաստատում է, որ ապահովագրված բեռը գտնվում է Ապահովադրի հաշվեկշռում (Եթե կորուստը տեղի է ունեցել Ապահովադրի (Շահառուի) ստորաբաժանումների միջև

g) In case of an accident in plumbing, heating, sewage, or fire-fighting systems, or damage by water from neighboring premises: a report of a managing/operating entity or an emergency service,

h) Certificates and documents from competent authorities confirming the fact of natural disasters or other emergencies,

i) In case of burglary, robbery, assault, fraud in respect of the cargo, or of cargo theft together with the carrying vehicle: a decision on or a rejection of the institution of a criminal case, a statement of rendering a person to be an affected party, a notification, a decision on suspension or termination of the criminal case,

j) In case of a general average, a captain's protest, an extract from the ship logbook, the average adjustment, information letters from the freight forwarder or ship operator,

k) Explanatory notes of persons who found the damage, and of the carriers,

l) In case the insured cargo was transported by rail: a carrier's statement, a railroad waybill with a note of the loss, a statement of loss filed with the station master, and/or other documents making it possible to establish the occurrence and circumstances of the event,

m) In case the insured cargo was transported by air: a carrier's statement, an air waybill with the note of the event, and/or other documents making it possible to establish the occurrence and circumstances of the event.

10.2.4 Documents confirming property interest of the Policyholder or the Beneficiary in the insured cargo:

a) A sale and purchase/ supply agreement, a contract, or an invoice of the supplier detailing the conditions of cargo supply and the date of cargo loss or damage risk transfer, payment documents, a copy of the purchase order, a packing list, a specification, a price list and a bill of entry,

b) An issue slip and a document certified by the company's accountant confirming the insured cargo being on the balance sheet of the Policyholder (if the loss occurred during the transportation of the cargoes between

բեռների փոխադրման ժամանակ), նյութական արժեքների ներքին շրջանառության մասին քաղվածք:

10.2.5 Գույքի ապահովագրական արժեքը հավաստող փաստաթղթերը

a) Մատակարարի հաշիվ-ապրանքագիր, բեռնագիր և/կամ հարկային բեռնագիր, բեռի մատակարարման պայմանագիր (Եթե նման պայմանագրում նշված է բեռի արժեքը), ապահովագրված բեռի հաշվեկշռային արժեքի մասին տեղեկանք, փորձագետի եզրակացություն, գույքի ձեռքբերման փորձագիտական հանձնաժողովի նիստի արձանագրություն, մաքսային փաստաթղթեր և/կամ այլ փաստաթղթեր, որոնք թույլ են տալիս արժանահավատորեն գնահատել բեռի փաստացի արժեքը:

b) Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին տրամադրել կրած ծախսերը հավաստող փաստաթղթերի պատճենները (համապատասխան պայմանագրեր, դիմումներ, հաշիվ-ապրանքագրեր, ընդունման-փոխանցման ակտեր, վճարման հանձնարարություններ):

10.2.6 Վնասի չափը հաստատող փաստաթղթեր

10.2.6.1 Բեռի լրիվ կորստի դեպքում, (փաստացի եւ կոնստրուկտիվ)

a) Բեռի փչացման կամ ոչնչացման վկայագիր, դուրսգրման հաշվետվություն, կորած բեռի դուրսգրման հաշվետվություն,

b) Բեռի փրկման համար կատարված ծախսերը հավաստող փաստաթղթեր (եթե այդպիսիք կան),

c) Կշռման հաշվետվություն,

10.2.6.2 Բեռի վնասման դեպքում

a) Վերանորոգման աշխատանքների կատարման համար արտադրողի և/կամ մասնագիտացված կազմակերպության նախահաշիվը/հաշիվ-ապրանքագիրը, անկախ փորձագետի եզրակացությունը, որը ներառում է վնասի չափի հաշվարկ,

b) Եթե վերանորոգումը հնարավոր է՝ պայմանագրեր իրավաբանական անձանց հետ վերանորոգման աշխատանքների իրականացման համար, վնասների մասին հաշվետվություններ, ծախսերի նախահաշիվներ, կատարված աշխատանքների և կրած ծախսերի արժեքը հաստատող փաստաթղթեր, ձեռք բերված նյութերի/սարքավորումների արժեքը հաստատող փաստաթղթեր, աշխատանքների ընդունման ակտեր, վճարային փաստաթղթեր,

c) Փաստաթուղթ, որը հավաստում է վնասված ապրանքի վերականգնման, արժեքի նվազեցման և/կամ վաճառքի ծախսերի նվազեցված գնով ծախսերը:

subdivisions of the Policyholder (Beneficiary)); a release note for internal handling of material values.

10.2.5 Documents confirming the insured value of the property

a) An invoice of the supplier, a consignment note and/or a tax invoice, or a contract for cargo supply (if the cargo value is specified in such contract), a certificate of the book value of the insured cargo, an expert opinion, minutes of the meeting of an expert commission on asset acquisition, customs documents and / or other documents making it possible to make a reliable assessment of actual cargo value,

b) In case the insured value of the cargo includes the cost of transportation, customs clearance, etc., the Policyholder shall provide the Insurer with the copies of the documents confirming the incurred costs (relevant contracts, applications, invoices, delivery and acceptance statements, payment orders).

10.2.6 Documents confirming the amount of the loss:

10.2.6.1 In case of total loss (actual and constructive) and loss of cargo:

a) A certificate on cargo spoilage or destruction, a write-off report, a lost cargo disposal report,

b) Documents confirming the cost of salvages (if any),

c) A Weighing report,

10.2.6.2 In case of cargo damage:

a) An estimate/ an invoice of the manufacturer and/or a specialized organization concerning repair works; an independent expert's opinion including calculation of the damage amount,

b) If the repair is possible – contracts with legal entities for repair works, damage reports, cost estimates, documents confirming the cost of the works performed and expenses incurred, documents confirming the cost of purchased materials/equipment, works acceptance reports, payment documents,

c) Document confirming the cost of reconditioning, reduction in the value of damaged goods and/or cost of selling at a reduced price.

10.2.6.3 Բեռի փրկության և կորուստների նվազեցման դեպքում ծախսերը՝

a) կրած ծախսերի չափն ու նպատակահարմարությունը հավաստող փաստաթղթեր,

10.2.7 Փաստաթղթեր, որոնք հաստատում են մեղավոր կողմին ներկայացվող պահանջի իրավունքը

a) Վնասի համար պատասխանատու անձի կամ կազմակերպության դեմ հայցը՝ տեղի ունեցած իրադարձության արդյունքում պատճառված վնասը փոխհատուցելու պահանջով՝ նման հայց ստանալու մասին նշումով կամ ստանալու հավաստմամբ, հայցի պատասխանով: Պահանջները պետք է ներկայացվեն համապատասխան օրենսգրքերով, կոնվենցիաներով և գործող օրենսդրությամբ սահմանված ժամկետում,

b) Պահանջի պատասխանը, եթե այդպիսին ստացվել է:

10.2.8 Այլ փաստաթղթեր, որոնք կարող են պահանջվել ապահովագրական պատահարի առաջացման փաստը պարզելու, սուբրոգացիոն իրավունքների իրականացման և/կամ վնասի պատճառներն ու չափը պարզելու համար՝

a) Բեռի պահպանման և մշակման հետ կապված պահեստավորման կամ այլ լոգիստիկ ծառայությունների պայմանագիր,

b) Վճարված ավտոկայանատեղերի հաշիվ,

c) Որակի վկայական,

d) Պահեստից բացթողնման վկայական/տրանսպորտային միջոցի բեռնման վկայական,

e) Տեղեկատվական նամակներ նավահանգստային ծառայություններից,

f) Դեպքի վայրի զննության արձանագրությունը,

g) Բեռնարկղերի/վագոնների ընդունման (թողարկման) ակտը, կոնտեյների/վագոնների ընդունման անդորրագիրը,

h) Մաքսային զննման արձանագրությունը, մաքսային հսկողության արձանագրությունը,

i) Արտադրողի կողմից որոշված որակի ստանդարտները և տեխնիկական բնութագրերը,

j) Պատվիրատուի նամակը՝ բեռը չստանալու մասին:

10.3 Անհրաժեշտ փաստաթղթերի հստակ ցանկը ներկայացնում է Ապահովագրողը՝ կոնկրետ պատահարի վերաբերյալ Ապահովադրի կամ Շահառուի կողմից վնասի ծանուցումը ստանալուց հետո:

10.4 Ապահովագրական պատահարի հանգամանքներից ելնելով՝ Ապահովադիրն իրավունք

10.2.6.3 In case of cargo salvage and loss mitigation expenses:

a) the documents confirming the amount and appropriateness of the incurred expenses.

10.2.7 Documents that secure the right of claim against at fault party:

a) A claim against a person or an entity responsible for the occurrence with a request to indemnify for the damage incurred as a result of the reported event with the note of receipt or with an acknowledgement of receipt of such claim, a response to the claim. The claim should be submitted before the deadlines set by respective codes, conventions, and the current law,

b) A response to the claim if any is received.

10.2.8 Other documents that may be required to establish the fact of the insured event, exercise subrogation rights, and/or establish the causes and the amount of damage:

a) A contract of warehousing or other logistic services concerning the cargo storage and handling,

b) A paid parking bill,

c) A Certificate of quality,

d) A Warehouse release certificate/ vehicle loading certificate,

e) Information letters from port services,

f) A report on inspection of the place of occurrence,

g) A report of acceptance (release) of containers/ carloads, a receipt of the container/carload acceptance,

h) A report of customs inspection, a report of customs supervision,

i) Quality standards and specifications determined by the manufacturer,

j) The customer's letter concerning non-receipt of the cargo.

10.3 The list of documents required for consideration and resolution of a specific loss shall be indicated by the Insurer in the list to be sent to the Policyholder or the Beneficiary after receiving a notice of loss.

10.4 Based on the circumstances of the insured event, the Policyholder shall have the right to provide additional

ունի ներկայացնել լրացուցիչ փաստաթղթեր (Ի լրումն սույն Կանոնների 10.3-րդ կետով նախատեսված ցանկի), որոնք անհրաժեշտ են ապահովագրական պատահարի առաջացման պատճառներն, հանգամանքները և վնասի չափը պարզելու համար:

documents (in addition to the list provided for under Par. 10.3 hereof) required to establish the causes and circumstances of the insured event and the extent of the caused damage.

10.5 Բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացվեն այն ժամկետներում, որոնք անհրաժեշտ են Ապահովագրողին, պատճառված վնասի համար պատասխանատու անձի նկատմամբ սուբրոգացիայի իրավունքի իրացման համար:

10.5 All the documents shall be submitted within the timelines required to implement the Insurer's subrogation right towards the person liable for the caused damages.

10.6 Հնարավոր ապահովագրական պատահարի առաջացման դեպքում ապահովագրողը և ապահովադիրը կարող են պայմանավորվել ապահովագրության պայմանագրի շրջանակներում հրահանգների (կարգի) մասին:

10.6 The Insurer and the Policyholder may agree, as part of the insurance contract, upon an instruction (procedure) in case of occurrence of a potentially insured event.

11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

11. CALCULATION OF INSURANCE INDEMNITY AMOUNT

11.1 Ապահովագրված բեռի կորստի, ոչնչացման կամ վնասի համար ապահովագրական հատուցումը վճարվում է փաստացի վնասի չափով:

11.1 An insurance indemnity for the risks of loss, total loss or damage of the insured cargo shall be paid in the amount of actual damages.

11.2 Բեռի վնասի դեպքում վնասի չափը որոշվում է կողմերի համաձայնությամբ՝

11.2 In case of cargo damage, the amount of loss shall be determined upon agreement of the Parties:

11.2.1 որպես անկախ փորձագետի եզրակացության հիման վրա կամ կողմերի համաձայնությամբ սահմանված՝ մինչև ապահովագրական պատահարի տեղի ունենալը բեռի արժեքի և դրա վրա հասնելուց հետո բեռի արժեքի միջև տարբերություն, կամ

11.2.1 as the difference between the value of the cargo before insured event occurrence and the value of the cargo after its occurrence, set on the basis of an independent expert's opinion or specified by agreement between the Parties; or

11.2.2 որպես ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետևանքով վնասված բեռը այն վիճակի բերելու ծախսը, որում այն գտնվում էր մինչև ապահովագրական պատահարի տեղի ունենալը (վերականգնում), կամ

11.2.2 as the cost of bringing the cargo damaged due to insured event occurrence back to the condition in which it was before insured event occurrence(reconditioning); or

11.2.3 կողմերի միջեւ այլ համաձայնությամբ:

11.2.3 otherwise as agreed by the Parties.

11.3 Մաքսային ձևակերպման, բրոքերային ծառայությունների, բեռնափոխադրման և բեռի փոխադրման հետ կապված այլ ծախսերի ապահովագրական հատուցումը վճարվում է վնասի փաստացի չափի նկատմամբ բեռի ապահովագրական արժեքին համամասնորեն:

11.3 Insurance indemnity for the costs of customs clearance, broker services, freight and other costs associated with cargo shipping shall be paid in proportion to the ratio of the actual damage amount to the insured value of the cargo.

11.4 Բեռի ամբողջական/կոնստրուկտիվ վնասի/ոչնչացման դեպքում (բեռը համարվում է ամբողջական վնասված/ոչնչացված, եթե այն

11.4 In case of total / constructive total loss of the cargo (a cargo shall be considered lost if it has completely and irreversibly lost its consumer properties and cannot be

ամբողջությամբ և անդառնալիորեն կորցրել է իր սպառողական հատկությունները և չի կարող օգտագործվել ըստ նշանակության (փաստացի կորուստ), կամ եթե բեռի վերանորոգման արժեքը գերազանցում է դրա ապահովագրական արժեքը (կոնստրուկտիվ լրիվ կորուստ)), Ապահովագրողն օգտագործում է հատուցման վճարման հետևյալ եղանակներից որևէ մեկը՝

11.4.1 Հատուցումը վճարվում է Ապահովադրին (Շահառուին) ապահովագրական արժեքի չափով՝ նվազեցնելով անկախ գնահատողի եզրակացությամբ հաստատված մնացորդային արժեքը:

11.4.2 Ապահովադրին (շահառուին) ապահովագրական հատուցումը վճարվում է բեռի ապահովագրական արժեքի չափով, իսկ մնացորդային արժեքի նկատմամբ իրավունքները Ապահովադիրը փոխանցում է Ապահովագրողին՝ բեռից հրաժարվելու մասին պայմանագրի/համաձայնագրի կամ հայտարարության համաձայն:

11.4.3 կողմերի միջեւ այլ համաձայնությամբ:

used for its intended purpose (actual loss), or if the cost of the cargo repairs exceeds its insured value (constructive total loss)), the Insurer shall use any of the following methods of indemnity payment:

11.4.1 The indemnity shall be paid to the Policyholder (Beneficiary) in the amount of the insured value less the cost of the salvage, confirmed by an independent appraiser's opinion;

11.4.2 The indemnity shall be paid to the Policyholder (Beneficiary) in the amount of the insured value of the cargo, with salvages to be transferred to the Insurer by the Policyholder on the basis of an abandonment agreement;

11.4.3 Otherwise as agreed by the Parties.

11.5 Բեռի Փրկում

11.5.1 Ապահովագրողը հատուցում է Բեռի Փրկման ծախսերն ու վճարները, ինչպես նաև վնասները կանխելու կամ նվազեցնելու համար Ապահովադրի կրած ծախսերը, եթե նման ծախսերն անհրաժեշտ են եղել և կատարվել են Ապահովագրողի ցուցումներին համապատասխան, նույնիսկ եթե համապատասխան միջոցները ձախողվել են:

Եթե ապահովագրական գումարը պակաս է ապահովագրական արժեքից, ապա հատուցման չափը և Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա վնասների չափը բացահայտելու և որոշելու, ինչպես նաև ընդհանուր վթարի ճշգրտման ծախսերը որոշվում են հաստատագրված այն համամասնությամբ, որով ապահովագրական գումարը հարաբերվում է ապահովագրական արժեքին:

11.5.2 11.5.1 կետով նախատեսված ծախսերը հատուցվում են ապահովագրողի կողմից՝ անկախ այն հանգամանքից, որ դրանք վնասների հատուցման գումարի հետ միասին կարող են գերազանցել ապահովագրական գումարը: Բեռի փրկման ծախսերը և ապահովագրության վճարները (ապահովագրված գույքին հասցված վնասի բացակայության դեպքում) ենթակա են հատուցման ապահովագրական գումարի սահմաններում:

11.5 General average:

11.5.1 The Insurer shall indemnify for the general average costs and contributions, as well as expenses of the Policyholder incurred to prevent or mitigate the losses if such expenses were necessary and made pursuant to the instructions of the Insurer, even if the corresponding measures have been unsuccessful.

If the sum insured is lower than the insured value, the amount of indemnity for these and the costs to identify and establish the amount of losses to be indemnified by the Insurer, and to draw up a general average adjustment, shall be defined fixed in the proportion as the sum insured bears to the insured value.

11.5.2 The expenses provided for by Par. 11.5.1, shall be indemnified by the Insurer regardless of the fact that they and the loss indemnity amount may together exceed the sum insured. General average costs and contributions under coverage A (when there is no damage to insured property) shall be indemnifiable within the sum insured.

11.6 Ապահովագրական հատուցման չափը հաշվարկվում է՝ հաշվի առնելով ապահովագրական գումարի համամասնությունը ապահովագրական արժեքի նկատմամբ, կիրառվող ֆրանշիզան և սույն Կանոնների 10-րդ կետում կամ Ապահովագրության պայմանագրում նշված փաստաթղթեր:

11.6 The amount of the insurance indemnity shall be calculated based on the ratio of the sum insured, the insured value, deductibles, and the documents listed in Par. 10 hereof or specified in the insurance contract.

11.7 Եթե ապահովագրական գումարը պակաս է բեռի ապահովագրական արժեքից, ապա ապահովագրական հատուցման չափը համաչափ է ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրական արժեքի հարաբերությանը, եթե կողմերի կողմից այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրում:

11.7 If the sum insured is lower than the insured value of the cargo, the amount of insurance indemnity shall be proportional to the ratio of the sum insured to the insured value, unless otherwise agreed by the Parties in the insurance contract.

12. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՒՄԸ

12.1 Ապահովագրողը ապահովագրական հատուցում տրամադրելու մասին որոշում է կայացնում Ապահովադրի/Շահառուի կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա: Նշված փաստաթղթերը ուսումնասիրելով՝ Ապահովագրողը որոշում է տեղի ունեցած իրադարձությունը որպես ապահովագրական պատահար ճանաչել և տրամադրել ապահովագրական հատուցում՝ հաստատելով ներկայացված հայցադիմումը, կամ Ապահովադրին/Շահառուին ուղարկում է ապահովագրական հատուցման տրամադրումը մերժելու մասին պատճառաբանված որոշում:

Եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա Ապահովագրողը քննում է Ապահովադրի (Շահառուի) ներկայացրած փաստաթղթերը և որոշում է կայացնում՝ Ապահովադրից (Շահառուից) բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան 15 աշխատանքային օրվա ընթացքում: Ապահովագրական հատուցումը վճարվում է դրական որոշումից հետո 20 բանկային օրվա ընթացքում: Պատահարը ապահովագրական ճանաչելու և ապահովագրական հատուցում վճարելու մասին որոշումը պետք է Շահառուին տեղեկացվի դրա ընդունման օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

12. INSURANCE INDEMNITY PAYMENT

12.1 The insurer shall decide to pay the insurance indemnity on the basis of the documents provided by the Policyholder (Beneficiary). Upon review of the documents the Insurer, having decided on whether to recognize an event as covered and whether to pay insurance indemnity, shall approve a summary claim statement or send the Policyholder (Beneficiary) a reasoned refusal to pay the insurance indemnity.

Unless provided for otherwise by the insurance contract, the Insurer shall consider the documents provided by the Policyholder (Beneficiary) and make a decision no later than 15 working days following the receipt of all the necessary documents from the Policyholder (Beneficiary). The insurance indemnity shall be paid within 20 banking days following the date of the summary claim statement approval. A decision on whether to recognize the event as covered and whether to pay the insurance indemnity shall be communicated to the Beneficiary within five working days following the date of its making.

12.2 Ապահովագրողն իրավունք ունի երկարաձգել ներկայացված փաստաթղթերի քննարկման և ապահովագրական հատուցում վճարելու մասին որոշման ընդունման ժամկետը հետևյալ դեպքերում՝

- եթե Ապահովադրի (Շահառուի) կամ նրանց ներկայացուցիչների նկատմամբ տեղի ունեցածի փաստով հարուցվել է քրեական գործ: Սույն դեպքում

12.2 The Insurer may extend the period of review of the provided documents and making of the decision on the indemnity payment in the following cases:

- if criminal investigation has been initiated against the Policyholder (Beneficiary), or their representatives on the fact of the event. In this case, the period provided for by

12.1 պայմանը ուժի մեջ է մտնում նշված անձանց անմեղ ճանաչող դատարանի որոշումն Ապահովագրողի կողմից ստանալու օրվանից:

- Եթե որևէ կողմի նախաձեռնությամբ նշանակվել է լրացուցիչ փորձաքննություն՝ ապահովագրական պատահարի պատճառած վնասի չափը և պատճառները որոշելու համար: Այդ դեպքում 12.1. կետով նախատեսված ժամկետը սկսվում է Ապահովագրողի կողմից փորձաքննության լրացուցիչ արդյունքներ ստանալու օրվանից:

Ապահովադրի ներկայացրած փաստաթղթերի քննարկման ժամկետը երկարաձգելու մասին որոշումն ընդունում է ապահովագրողը սույն պայմանագրի 12.1 կետում նշված ժամկետներում և Շահառուին տեղեկացվում է այդ որոշումը կայացնելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

12.3 Եթե Ապահովադիրը (Շահառուն) երրորդ անձանցից ստանում է վնասի հատուցում, ապա Ապահովագրողն Ապահովադրին (Շահառուին) հատուցում է ապահովագրության պայմանագրով վճարման ենթակա գումարի և երրորդ անձանցից Ապահովադրի (Շահառուի) ստացած գումարի տարբերությունը:

12.4 Եթե ապահովագրական հատուցում վճարելուց հետո պարզվի, որ Ապահովադիրը (Շահառուն) ապահովագրական հատուցում ստանալու իրավունք չի ունեցել, ապա Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին վերադարձնել հատուցման գումարը՝ Ապահովագրողի դիմումից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

12.5 Մեկ իրադարձության կամ միևնույն պատճառով առաջացած իրադարձությունների շարքի հետևանքով տեղի ունեցած վնասները համարվում են մեկ ապահովագրական պատահար:

12.6 Եթե ապահովագրական գումարը սահմանված է արտարժույթով, ապա (բացառությամբ այն դեպքերի, երբ Շահառուն ոչ ռեզիդենտ է) ապահովագրական հատուցումը վճարվում է ՀՀ դրամով՝ վճարման ամսաթվի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով կամ ապահովագրության պայմանագրով նախատեսված այլ փոխարժեքով:

13. ԱՊԱՀՈՎԱԴՐԻ՝ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ

13.1 Ապահովագրության շրջանակներում հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ Ապահովադրի կամ Շահառուի պահանջի իրավունքն

Par. 12.1 hereof shall start from the date of the Insurer's receipt of the court decision rendering the said persons not guilty

- If on the initiative of any Party, an additional expert appraisal has been appointed to identify the amount and causes of the loss caused by the insured event. In this case, the period provided for by Par. 12.1 hereof shall start from the date of the Insurer's receipt of the additional expert appraisal results.

A decision to extent the period of review of the documents provided by the Policyholder shall be made by the Insurer within the timeframe specified in Par. 12.1 hereof and communicated to the Beneficiary within five working days following the date of its making.

12.3 If the Policyholder (Beneficiary) receives the indemnity for damage from third parties, the Insurer shall indemnify the Policyholder (Beneficiary) for the difference between the amount payable under the insurance contract and the amount received by the Policyholder (Beneficiary) from third parties.

12.4 If after the insurance indemnity payment it is found that the Policyholder (Beneficiary) had no right to receive the insurance indemnity, the Policyholder shall return the indemnity amount to the Insurer within five working days starting from the date of such request by the Insurer.

12.5 All losses incurred as a result of a single event or a series of events arising from a single occurrence shall be considered as one insured event.

12.6 If the sum insured is established in a foreign currency, then (except for cases when the Beneficiary is a non-resident), the insurance indemnity shall be paid in Armenian drams using the exchange rate set by the RA Central Bank as of the payment date, or by a different rate envisaged by the insurance contract.

13. TRANSFER OF THE POLICYHOLDER'S RIGHT TO INDEMNIFICATION BY THIRD PARTIES TO THE INSURER (SUBROGATION)

13.1 The Policyholder's or the Beneficiary's right of claim against a person liable for the losses indemnified by

անցնում է ապահովագրական հատուցում վճարած Ապահովագրողին:

13.2 Ապահովագրողն իրեն հանձնված պահանջի իրավունքն իրականացնում է Ապահովադրի կամ Շահառուի և վնասների համար պատասխանատու անձի միջև հարաբերությունները կարգավորող գործող օրենսդրությանը համապատասխան:

14. ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

14.1 Ապահովագրողը իրավունք ունի պահանջել վճարված հատուցման վերադարձ, եթե ապահովագրական հատուցման վճարումից հետո ի հայտ են գալիս ապահովագրական հատուցման վճարումը մերժելու սույն Կանոններով և/կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքեր:

14.2 Սույն Կանոնների համաձայն կնքված Պայմանագրերի գործողության ընթացքում կամ հետո Կողմերի միջև ծագող վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Անհամաձայնության (համաձայնության չգալու) դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

15. ՀԱՎԵԼՅԱԼ ԿԵՏԵՐ

15.1 Ապահովագրության պայմանագրերի դրույթները գերակայում են սույն Կանոնների նկատմամբ:

15.2 Ապահովագրության պայմանագրերի կատարման ժամանակ ծագող հարցերը, որոնք չեն արտացոլվում սույն Կանոններում, կարգավորվում և լուծվում են ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

15.3 Սույն Կանոնների համաձայն Ապահովագրողի կողմից Ապահովադրի (Շահառուի) հասցեին ուղարկված բոլոր ծանուցումները և գրությունները համարվում են պատշաճ ծանուցված, եթե պահպանվել են հետևյալ պայմաններից որևէ մեկը.

15.3.1. Ծանուցումը ուղարկվել է փոստային առաքմամբ՝ ապահովագրության Պայմանագրում կամ հայտային դիմումում նշված հասցեով

15.3.2. Ծանուցումը ուղարկվել է SMS հաղորդագրությամբ՝ ապահովագրության Պայմանագրում կամ Ապահովադրի (Շահառուի) և/կամ նրա լիազոր անձի կողմից տրամադրած այլ փաստաթղթի մեջ (հայտային դիմում, հայտարարություն, և այլն) նշված հեռախոսահամարով,

insurance shall be transferred to the Insurer that has paid the insurance indemnity.

13.2 The Insurer shall exercise the transferred right of claim in accordance with the applicable law governing the relations between the Policyholder or the Beneficiary and the person liable for the losses.

14. DISPUTE SETTLEMENT

14.1 The insurer has the right to demand a refund of the paid compensation if, after payment of the insurance indemnity, the grounds for refusal of the insurance indemnity stipulated by these Rules and the RA legislation become known.

14.2 All disputes between the Parties that arose during and after the expiration of the contracts concluded on the basis of these rules are resolved through negotiations. In case of disagreement (failure to reach agreement), disputes will be resolved in accordance with the current legislation of the Republic of Armenia.

15. OTHER PROVISIONS

15.1 Provisions of insurance contracts shall prevail over these Rules.

15.2 Issues arising in the performance of the insurance contracts that are not reflected in these Rules shall be governed by and resolved in accordance with applicable RA law.

15.3 All letters and notifications sent by the Insurer to the address of the Insured (Beneficiary) in accordance with these Rules are considered to be sent properly if one of the following conditions is met:

15.3.1. The notification was sent by post to the address indicated in the Insurance Contract or in the notice of the insured event,

15.3.2. The notification was sent in the form of an SMS message by phone specified in the Insurance Contract or in another document (notice, application for payment) with contact details submitted on behalf of the Insured (Beneficiary),

15.3.3. Ծանուցումը ուղարկվել է էլեկտրոնային նամակի տեսքով՝ ապահովագրության Պայմանագրում կամ հայտային դիմումում նշված էլեկտրոնային հասցեով,

15.3.3. The notification was sent in the form of an e-mail message to the e-mail address specified in the Insurance Contract or in the notice of the insurance event.

15.4 Հասցեների և/կամ վերոնշյալ ռեկվիզիտների փոփոխության դեպքում ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է այդ մասին ողջամիտ ժամկետում տեղեկացնել Ապահովագրողին: Եթե Ապահովագրողին ողջամիտ ժամկետում չեն տեղեկացրել հասցեների և/կամ այլ ռեկվիզիտների փոփոխության մասին, ապա Ապահովադրին (Շահառուին) ուղարկված բոլոր ծանուցումները/գրությունները հին հասցեներով/ռեկվիզիտներով համարվում են պատշաճ ծանուցված այն ամսաթվից, երբ այդ ծանուցումները ստացվել են այդ հասցեներում:

15.4 In case of change of addresses and / or details, the Insured (Beneficiary) will inform the Insurer in advance of this. If the Insurer has not been notified of a change in the address and / or details of the other party in advance, then all notifications and notifications sent to the Insured (Beneficiary) at the previously known address will be considered received from the date they arrived at the previous address.

15.5 Ապահովագրողն իրավունք ունի միակողմ՝ առանց Ապահովադրի համաձայնության փոփոխություն և/կամ լրացում կատարելու սույն Կանոններում:

15.5 The Insurer has the right to unilaterally, without the consent of the Insured, make changes and / or additions to these Rules.

15.6 Կանոններում փոփոխություն և/կամ լրացում կատարելու դեպքում Ապահովագրողը պարտավոր է ոչ ուշ քան մեկ ամիս առաջ գրավոր ծանուցել Ապահովադրին:

15.6 When making changes and / or additions to the Rules, the Insurer is obliged to notify the Insured of this in writing no later than one month.

15.7 Կատարված փոփոխությունների և/կամ լրացումների հետ համաձայն չլինելու դեպքում Ապահովադիրն իրավունք ունի անմիջապես լուծելու ապահովագրության Պայմանագիրը:

15.7 In case of disagreement with the changes and / or additions to the Rules, the Insured has the right to immediately terminate the insurance contract.